«Սոցիալական մեդիան մարդու իրավունքների պաշտպանության գործում»
փորձագիտական հոդվածների ժողովածու
2012թ.

Գիրքը պատրաստել է «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպությունը «Հասանելի դառնալ մարդկանց» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հաղորդակցության ռեսուրսների զարգացման ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Ինտերնյուսի աջակցությամբ եւ ԱՄՆ պետդեպարտամենտի ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ աշխատանքի բյուրոյի (DRL) ֆինանսավորմամբ: DRL-ը նպաստում է ժողովրդավարության զարգացմանը, մարդու հիմնարար իրավունքների եւ աշխատանքի իրավունքի պաշտպանությանն ամբողջ աշխարհում:

Խմբագրական կազմ՝
Նարինե Սաֆարյան
Գեղամ Վարդանյան
Արմեն Սարգսյան
Արշալույս Մուրադյան
Նունե Սարգսյան

Տեքստի խմբագիր՝ Հերիքնազ Հարությունյան
Դիզայն եւ էջադրում՝ «Մատիտ» ստուդիա

ՑԱՆԿ

Նախաբան 4

Քաղաքացիական շարժումները սոցիալական ցանցերում. 6
Իրավունքների պաշտպանության մեխանիզմները Facebook-ում. . . . 6
Ֆեյսբուքյան մի քանի նախաձեռնությունների վերլուծություններ . . . 13
Հայրենիք, պաշտպանի՛ր պաշտպանիդ. «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն 18

Վիդեոն ինտերնետում. ազդեցիկ գործիք ակտիվիստների համար . . 26

Լուսանկարը սոցիալական ցանցերում. ինֆորմացիայի տարածման արդյունավետ ձեւ. 32

Հրապարակային հաշվետվություն կամ հանրային առցանց վերահսկողություն 36

Բջջային հեռախոսը որպես իրավունքների պաշտպանության գործիք. 42

Սոցիալական հավելվածներն իրավապաշտպան նախաձեռնություններում 48
Crowdsourcing. հայաստանյան փորձը 55

Նախաբան

Այս գիրքը փորձ է՝ վերլուծելու եւ ընդհանուր պատկերով ներկայացնելու, թե ինչպես են օգտագործվել սոցիալական մեդիայի հնարավորությունները Հայաստանում՝ իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ակտիվության տեսանկյունից: Ներկայացված օրինակները վերջին տարիների քաղաքացիական շարժումներից են եւ սերտորեն առչվում են ինտերնետային տեխնոլոգիաների կիրառման հետ:

Ի՞նչ են շահել եւ ի՞նչ կորցրել քաղաքացիական շարժումները վիրտուալ հարթակներ տեղափոխվելով, որքանո՞վ արդյունավետ եւ նպատակային են օգտագործվել ցանցային հաղորդակցության հնարավորությունները, ո՞ր շարժումներն են հաջողության հասել եւ ինչու, ինչպե՞ս է Հայաստանում սոցիալական մեդիայի զարգացումն ընդհանրապես ազդել մարդկանց քաղաքացիական ակտիվության վրա:

Գրքում կգտնեք այս հարցերի պատասխանները, նաեւ՝ փորձագիտական առաջարկներ ու եզրահանգումներ այն մասին, թե նպատակներից ու խնդիրներից ելնելով, ինչպես է փոխվում սոցիալական մեդիայի գործիքակազմը:

Գրքի առանձին բաժիններ ներկայացնում են ինտերնետային տարբեր գործիքների կիրառման հնարավորություններն ու վերլուծում համապատասխան օրինակները:

Հոդվածների հեղինակները տեսաբաններ չեն: Նրանք մարդիկ են, ովքեր իրենց գործունեության մեջ առավելագույնս օգտագործում են սոցիալական մեդիան եւ գիտեն, թե որոնք են դրա միջոցով հաջողության հասնելու պայմանները կամ գործը տապալելու վտանգները:

Կարդալով նրանց հոդվածները՝ հավանաբար դուք էլ ձեր առաջարկներն ու լրացումները կունենաք քննարկվող թեմաների վերաբերյալ, եւ դա բնական է… Այս ոլորտում ամեն ինչ շատ արագ է զարգանում ու փոփոխվում:

Մինչ մենք տպագրության էինք պատրաստում այս գիրքը, համացանցում նոր զարգացումներ ու օրինակներ հայտնվեցին, որոնք նույնպես կարող էին տեղ գտնել այս գրքում: Այդ առումով՝ սոցիալական մեդիայի մասին ցանկացած նոր գիրք «դատապարտված է» շուտ «հնանալու»: Նաեւ սա է պատճառը, որ գրքում շեշտը դրել ենք ոչ թե նոր մեդիա հարթակների հնարավորություններն ու գործիքները ներկայացնելու, այլ դրանց օգնությամբ քաղաքացիական արշավներ կազմակերպելու ռազմավարության ու մեթոդների վրա:

Այս գրքի տպագրությամբ «Ինտերնյուս»-ն ամփոփում է «Հասանելի դառնալ մարդկանց» ծրագիրը, որն իրականացվել է 2010-2012թթ.-ին, իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների եւ անհատների համար: Ծրագրի նպատակը նրանց ծանոթացնելն էր նոր մեդիա հարթակներում հաղորդակցության եւ տեղեկությունների տարածման հնարավորություններին: Երկու տարվա ընթացքում 72 հասարակական կազմակերպություններից եւ 6 քաղաքացիական նախաձեռնություններից 120 մարդ է մասնակցել ծրագրի շրջանակներում անցկացվող՝ «Նոր մեդիան իրավապաշտպանների համար» դասընթացներին:

Շնորհակալ ենք բոլորին, ովքեր այդ ընթացքում համագործակցել են մեզ հետ եւ իրենց գործով, խորհուրդներով ու մասնակցությամբ օգնել են պատրաստել եւ տպագրել այս գիրքը:

Նոր մեդիա հարթակներն իրավունքների պաշտպանության արշավներում օգտագործելը Հայաստանում նոր երեւույթ է, եւ հաջողության պատմությունները, ցավոք, այնքան էլ շատ չեն: Ուստի, չզարմանաք, եթե գրքում հանդիպեք նաեւ կրկնվող օրինակների: Դրանցում, հաջողության բանաձեւերից բացի, նաեւ վճռականության ու ոգեւորության ծիլեր կան, որոնց համար սոցիալական մեդիան պարարտ հող է՝ ծլարձակելու, տարածվելու եւ մյուսներին ոգեշնչելու համար: Գուցե մի քանի տարի հետո, այսօրինակ նոր գիրք կազմելիս, հաջողության պատմություններն ու օրինակներն արդեն ավելի շատ լինեն, քան դրանց շուրջ վերլուծությունները:

Քաղաքացիական շարժումները սոցիալական ցանցերում

Իրավունքների պաշտպանության մեխանիզմները Facebook-ում



Արայիկ Հարությունյան

Պատմական գիտությունների թեկնածու, արեւելագետ: Աշխատում է Երեւանի պետական համալսարանում, ինչպես նաեւ ուսումնասիրում է սոցիալական մեդիայի ազդեցությունը հասարակական-քաղաքական զարգացումների, շարժումների եւ նախաձեռնությունների ձեւավորման վրա:
***Facebook**: facebook.com/arayik.harutyunyan*
***Twitter**: @tsiranyan*
***Email**: arayik_hae@yahoo.com*

Սոցիալական ցանցերը վերջին տարիների ընթացքում լուրջ գործիք են դարձել հասարակական-քաղաքական տարբեր զարգացումներում: Մարդու հիմնարար ազատությունների խնդիրներ ունեցող երկրներում սոցիալական ցանցերի առկայությունը թույլ է տալիս շրջանցել տեղեկատվություն ստանալու արգելքները՝ հեռուստատեսության վերահսկելիությունը, տպագիր մամուլի սահմանափակումները եւ այլն: Սոցիալական ցանցերը նաեւ լավ գործիք են հասարակական-քաղաքական շարժումների ինքնակազմակերպման համար:

Հայաստանում վերջին 4-5 տարիների ընթացքում արձանագրվել են մի շարք օրինակներ, որոնք թույլ են տալիս պնդել, որ սոցիալական ցանցերի ճիշտ օգտագործման դեպքում՝ տվյալ խնդրով մտահոգված անձի կամ անձանց խմբի համար արդյունքը կարող է բավական դրական լինել:

Սակայն այստեղ էլ կան որոշակի բարդություններ, որոնք չհաղթահարելու դեպքում առնվազն կարելի է ձախողել այս կամ այն նախաձեռնությունը, իսկ երբեմն էլ՝ ստանալ հակառակ արդյունքը:

Սոցիալական ցանցերում որոշակի խնդիրներ բարձրացնելու կամ դրանց լուծումներ տալու համար հաճախ ստեղծվում են էջեր կամ խմբեր: Մենք փորձել ենք մի քանի հասարակական-քաղաքական նախաձեռնությունների՝ սոցիալական ցանցերում ծավալած գործունեության վերլուծությամբ ցույց տալ սոցցանցերում գործունեություն ծավալելու դրական եւ բացասական կողմերը, վեր հանել այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ դրա ճանապարհին: Օրինակները վերցված են Facebook-ից, քանի որ մյուս սոցիալական ցանցերում տեղի ունեցող զարգացումները հայտնի չեն հայաստանյան հանրությանը կամ որեւէ դրական զարգացում չեն ապահովել: Դրանցից երկուսը՝ Odnoklassniki.ru[1] եւ Vkontakte.ru կայքերը, որոնք նույնպես շատ տարածված են Հայաստանում, նման գործընթացներում ներգրավված չեն, ինչը հիմնականում կապված է այդ սոցիալական ցանցերում անհրաժեշտ գործիքակազմի բացակայությամբ: Twitter-ը, որն աշխարհում մի քանի հարյուր միլիոն օգտատեր ունի, նույնպես վատ է զարգացած Հայաստանում: Այն հիմնականում այլ ցանցերում ակտիվության վերաբերյալ տեղեկատվության տարածման միջոց է, իսկ շարժումների եւ նախաձեռնությունների հաշիվները Facebook-ում եւ Twitter-ում հաճախ փոխկապակցված են:

Խմբի կամ էջի անվան ընտրությունը

Նախաձեռնության հաջողության ամենակարեւոր տարրերից մեկը տվյալ էջի կամ խմբի անվանումն է: Փորձը ցույց է տալիս, որ այն պետք է լինի կարճ, հասկանալի եւ միաժամանակ արտացոլի խնդրի բուն էությունը[2]: Նախաձեռնության անհաջողություններից մեկը կարող է լինել վերնագրում լատինական տառերի առկայությունը կամ դրա՝ անգլերենով գրված լինելը: Օրինակ, այս հարցը հենց սկզբից ծագել է «հղիների խնդրին[3]»

1 Այս գործոնին կարելի է ավելացնել նաեւ անձնական տվյալների անվտանգության վերաբերյալ այս սոցցանցի կողմից առաջարկվող ոչ բավարար երաշխիքները:

2 Շատ կարեւոր է նաեւ խմբի տարբերանշանի մշակումը: Կան մի քանի հաջող օրինակներ, երբ տարբեր կայքերում կամ սոցցանցերում տարբերանշանի հայտնվելը միանգամից զուգորդվում է տվյալ նախաձեռնության հետ: Տես նկար 4:

3 2010թ.-ի վերջին ՀՀ կառավարությունն առաջարկեց մի օրինագիծ, ըստ որի՝ պետությունը դադարելու էր բարձր աշխատավարձ ստացող կանանց նույնչափ նպաստ վճարել հղիության դեպքում: Շարժումը տեւեց 3 ամիս եւ ավարտվեց կառավարության կողմից առաջարկված փոփոխությունների մերժմամբ:

1

վերաբերող էջում: Էջը թեպետ ներհայաստանյան խնդրի էր վերաբերում եւ այդ շարժման միջազգայնացման նպատակ չէր դրել, սակայն անվանումը գրված էր անգլերենով (Stop changes in maternity leave law[4]), ինչն այդ խմբում բազմաթիվ քննարկումների տեղիք տվեց (երբեմն ուշադրությունը շեղելով հիմնական թեմայից): Քննարկումները թեժ էին նաեւ այն պատճառով, որ հենց այդ տարի բացվել էր մեկ այլ՝ «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» խումբը, որը հայերենի, հայերենով գրելու, լատինատառից հրաժարվելու լուրջ շարժում էր սկսել (Տե՛ս նկար 3): Բացասական օրինակ է «Արժանապատիվ տրանսպորտ»[5] խմբի անվանումը, որը պետք է զբաղվեր (հավանաբար զբաղվում է) հանրային տրանսպորտի հույժ կարեւոր՝ ուղեւորի, վարորդի, հետիոտնի տարրական իրավունքների ոտնահարման խնդիրներով: Սակայն հենց սկզբից, բուն խնդրի վրա կենտրոնանալու փոխարեն, Facebook-ում շատերը սկսեցին ծաղրել այն, իսկ նախաձեռնությունն այդպես էլ լուրջ հաջողությունների չհասավ, թեպետ խնդրի հրատապությունը թույլ էր տալիս կանխատեսել, որ այն կարող էր ունենալ համախմբող լուրջ հնարավորություններ[6]:

Խմբի կամ էջի կառավարչի (ադմինի) ընտրությունը

Սա նախաձեռնության հաջողության վճռորոշ երաշխիքներից մեկն է: Ադմինի ընտրությունը երբեմն ավելի կարեւոր է նախաձեռնության անվանման ընտրությունից, քանի որ նրա գործողություններից է կախված տվյալ նախաձեռնության հաջող մեկնարկը: Այստեղ կարելի է բերել «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը»[7] խմբի օրինակը, որը համարվում է Facebook-ում ծավալված ամենահաջող շարժումներից մեկը: Հենց ամենասկզբից խմբի ադմիններ էին մարդիկ, ովքեր քաջ ծանոթ էին

4 facebook.com/groups/maternity/

5 http://on.fb.me/UJEv3j

6 Մոտ մեկ տարվա գործունեությունից հետո ֆեյսբուքյան խմբում գրանցվել է ընդամենը 650 մարդ:

7 facebook.com/groups/menkdemenk/

խնդրին, եւ երբ «Լեզվի մասին օրենքում փոփոխությունների օրինագծի» կողմնակիցները փորձում էին այդ խմբի էջում իրենց հակափաստարկներով լռեցնել օտարալեզու դպրոցների բացմանը դեմ մարդկանց, ստանում էին հստակ հակափաստարկներ: Այդ խմբի ադմիններ էին (են) ռեժիսոր Արա Շիրինյանը, հրապարակախոս Վահան Իշխանյանը, բլոգեր Արմեն Հովհաննիսյանը, Facebook-ում շատ ակտիվ օգտատեր Էդգար Առաքելյանը, որոնք նախաձեռնողների խմբում էին եւ հստակ պատկերացնում էին իրենց անելիքն ու ասելիքը:

Խմբի կառավարչի պարտականությունների մեջ է մտնում նախաձեռնող խմբի բոլոր որոշումների հրապարակայնացումը:

Խմբի կամ էջի նպատակների սահմանումը

Անհրաժեշտ է, որ նախաձեռնության հեղինակը կամ հեղինակները հստակ ներկայացնեն խնդրի էությունը, սահմանեն իրենց կարճաժամկետ եւ երկարաժամկետ նպատակները: Վերացական եւ անորոշ հիմնավորումները խմբի կամ էջի անդամների կամ համակիրների թվի արագ



3

աճ չեն ապահովի: Վերջին գործոնն անչափ կարեւոր է նման նախաձեռնությունների համար, քանի որ նոր անդամների ցանկացած «հավանում» (like) կամ «համօգտագործում» (share) հարյուրապատկում է այս խմբում նոր անդամների հայտնվելու հավանականությունը: Facebook-ի առանձնահատկություններից մեկն այն է, որ յուրաքանչյուր օգտատիրոջ ակտիվություն այս կամ այն էջում հասանելի է դառնում նաեւ տվյալ օգտատիրոջ ընկերներին (հայաստանցի միջին ակտիվությամբ օգտատերերը հաճախ հարյուրավոր ընկերներ են ունենում): Նոր նախաձեռնության տարածման արդյունավետ գործիքներից է նաեւ Facebook-ում գովազդի միջոցով տվյալ էջի կամ խմբի մասին ինֆորմացիա տարածելը: Սոցիալական այս ցանցը ոչ շատ մեծ գումարով թույլ է տալիս տվյալ նախաձեռնության մասին տեղեկացնել[8] հազարավոր մարդկանց:

Շատ հաճախ, կոնկրետ նախաձեռնության շուրջ հավաքված մարդիկ ծայրահեղ տարբեր դիրքորոշում են ունենում այլ հարցերի վերաբերյալ: Այս պատճառով անհրաժեշտ է, որ թեմայից շեղումներ չլինեն, ինչը նույնպես հմուտ ադմինի գործառույթն է: Նախաձեռնության էջում կամ խմբում այլ բովանդակության նյութերը հաճախ բուռն քննարկումների տեղիք են տալիս, ինչի հետեւանքով խմբում առաջանում են լուրջ հակասություններ, ինչը կարող է դժվարացնել շարժման ընթացքը կամ ձախողել այն:

Ինքնակազմակերպման լայն հնարավորություններ

Facebook-ի գործիքներն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրներով մտահոգ մարդկանց հնարավորություն են տալիս արագ ինքնակազմակերպվել: Այս գործիքների միջոցով արագ քննարկվում են կազմակերպչական հարցեր, նախաձեռնվում են ակցիաներ, գրվում են դիմումներ, որոնց առցանց տարբերակների համար հնարավոր է մի քանի ժամում հարյուրավոր եւ հազարավոր ստորագրություններ ապահովել՝ կախված խմբի կամ էջի մասսայականությունից: Քանի որ նախաձեռնությունները հաճախ վերաբերում են իրավունքի եւ օրենքի

8 facebook.com/advertising/

խախտումներին ու ոտնահարմանը, ապա իրավական հստակ գնահատականներ տալու մեծ անհրաժեշտություն է առաջանում: Փորձը ցույց է տալիս, որ նախաձեռնությունների առաջին իսկ քայլերից մեկը լինում է տվյալ նախաձեռնության անդամներից իրավաբանական կրթությամբ մարդկանց խմբի ձեւավորումը, ինչի շնորհիվ ապահովվում է տվյալ նախաձեռնության՝ իրավունքին եւ օրենքին վերաբերող քայլերում ավելի գրագետ գործունեության իրականացումը[9]:

Մեդիա նյութերը, նկարները, տեսանյութերը՝ Facebook-ում գործունեության արդյունավետության կարեւոր տարրեր

4

Խմբերը եւ էջերը շատ հաճախ դառնում են տվյալ խնդրի շուրջ գրված եւ հրապարակված նյութերի շտեմարան, որոնք հետագայում կարող են օգտագործվել շահագրգիռ խմբերի եւ հասարակական կազմակերպությունների կողմից: Շարժումներին լրացուցիչ լիցք է տալիս ինտերակտիվ նյութերի (բաներների), նկարների, տեսահոլովակների պատրաստումը եւ հրապարակումը, որոնց հաջողության դեպքում դրանք արագ տարածվում են եւ լրացուցիչ ուշադրություն են հրավիրում իրենց վրա: Հաճախ տեսահոլովակի հայտնվելը համացանցում՝ կարող է նոր նախաձեռնությունների առաջ գալու պատճառ դառնալ: Այդպես էր թե՛ «Եղնիկներ» զորամասում սպայի (Սասուն Գալստյանի[10]) կողմից զինվորի նվաստացման, թե՛ Երեւանի թիվ 129 դպրոցի ուսուցչուհի Լենա Աբգարյանի կողմից

9 Օրինակ՝ «Բանակն իրականում», «Հղիների շարժում», «Մենք չենք կռանում երթուղայինում» եւ այլն:

10 Տեսանյութում զորամասի սպաներից մեկը նվաստացնում է նույն զորամասի զինվորներից մեկին՝ խփելով նրա ականջներին: Համացանցում տեսանյութը շատ արագ տարածվեց, եղան հրապարակումներ, որից հետո սպան ձերբակալվեց: http://goo.gl/jWQJA

աշակերտներին ծեծի ենթարկելու[11] տեսանյութերի դեպքում[12]: Այս թեմաներով սկսված քննարկումներն ու դրանց հետեւած ակցիաները, որոնք հիմնականում կազմակերպվում էին Facebook սոցիալական ցանցում, տվել են իրենց արդյունքը. առաջինի դեպքում սպան ձերբակալվել է, իսկ երկրորդի դեպքում ուսուցչուհին հեռացվել է աշխատանքից: Խմբերի ակտիվության ապահովմանը նպաստում է նաեւ հարցումների անցկացումը: Մեծ էջերը հարցումների միջոցով կարող են համախմբող դեր կատարել այն դեպքերում, երբ խնդրի նկատմամբ հանրային ուշադրությունը մարել է կամ մեծ չէ:

11 Տեսանյութում Երեւանի թիվ 129 դպրոցի ուսուցչուհի Լենա Աբգարյանը ծեծի է ենթարկում մի քանի աշակերտի: http://goo.gl/tMrEQ

12 Սոցիալական ցանցերում մեծ աղմուկ բարձրացրեց նաեւ մի տեսանյութ, երբ ուսուցիչը կտրել էր աշակերտների մազերը, քանի որ իրեն դուր չէր եկել նրանց սանրվածքը: Լուրջ ճնշումներից հետո Դանիել Վարուժանի անվան թիվ 89 դպրոցի քիմիայի ուսուցչուհի, 4-րդ դասարանի դասղեկ Գայանե Թանգյանն ազատվեց աշխատանքից: http://goo.gl/8HRDc

Ֆեյսբուքյան մի քանի նախաձեռնությունների վերլուծություններ

Սամվել Մարտիրոսյան

Զբաղվում է սոցիալական մեդիայով եւ տեղեկատվական անվտանգությամբ: Դասավանդում է դպրոցում եւ համալսարաններում: Կրթությամբ մաթեմատիկոս եւ մշակութաբան է:
***Facebook**: /samvel*
***Twitter**: @kornelij*
***Blog**: kornelij.livejournal.com*

1 Համացանցում սկիզբ առած եւ հաջողության հասած առաջին շարժումներից մեկն ուղղված էր **«Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի պաշտպանությանը**[1]: Շարժման մասնակիցներին 2010 թվականի գարնանը հաջողվեց կասեցնել ամառային դահլիճը քանդելու եւ դրա տեղը եկեղեցի կառուցելու՝ կառավարության որոշումը:

Ինչու հաղթեց շարժումը

- *Որպես կազմակերպիչներ ներգրավված էին արհեստավարժ ճարտարապետներ, որոնք ապահովում էին շարժման գաղափարական հենքը, թույլ չէին տալիս, որ ապատեղեկատվություն պարունակող կամ շփոթեցնող լուրերը ներթափանցեն թեմայի շուրջ ծավալվող քննարկումներում:*

- *Սփոռագրահավաքում ներգրավվեցին շատ ակտիվիստներ՝ ապահովելով մի քանի տասնյակ հազար սփոռագրություն:*
- *Հաջողվեց շարժման մեջ ներքաշել ՀԼՄ-ներին, որոնք ապահովեցին անհրաժեշտ տեղեկատվական ֆոնը:*

1 http://on.fb.me/11j9mcd

2 Քաղաքացիական ակտիվության մեկ այլ վառ օրինակ, որը նույնպես սկսվեց բլոգներում եւ Facebook-ում՝ **օտարալեզու դպրոցների վերաբացման դեմ շարժումն**[2] էր: Այն նախաձեռնողներին հաջողվեց կես տարվա ընթացքում այս թեման դարձնել ամենաքննարկվողներից մեկը հասարակության մեջ, բավականին լուրջ փոփոխություններ մտցնել ԱԺ-ում քննարկման դրված օրենսդրական փաթեթում, սակայն օրենքի ընդունումն ամբողջությամբ կասեցնել չհաջողվեց:

Ինչն էր դժվարացնում այս խմբի աշխատանքը

- *Կառավարության եւ Ազգային ժողովի մեծամասնության հակազդեցությունը խիստ ուժեղ էր եւ սկզբունքային:*

- *Չնայած խմբի մեջ ներգրավվել էին հազարավոր ցանցային ակտիվիստներ, իրական կյանքում (օֆլայն) անցկացվող ակցիաները խիստ սակավաթիվ էին: Այս օրինակում առաջին անգամ վառ դրսեւորվեց այսպես կոչված «քլիքթիվիզմը» (clicktivism, slacktivism), երբ մարդիկ, սոցցանցերում մի քանի գործողություն կատարելով, իրենց պարտքը համարում են կատարած, սակայն շարժումը չի ստանում համապատասխան մարդկային, կամային ներուժ, եւ հիմնական բեռը մնում է մի քանի իրական ակտիվիստների վրա:*

3 Հայաստանյան սոցցանցում ազդեցիկ էր **հղի կանանց նպաստների փոփոխության դեմ բողոքի շարժումը**[3]: Կառավարության համապատասխան որոշումը բողոքի ալիք բարձրացրեց հղի կանանց եւ ոչ միայն նրանց շրջանում:

Ինչն օգնեց խմբին

- *Խումբն աճեց պայթյունային տեմպերով՝ իր մեջ ներգրավելով ինչպես հիմնական շահառուներին, այնպես էլ մտահոգ քաղաքացիների, որոնք անմիջապես անցան գործողությունների՝ ցույցերի, ՀԼՄ-ներում հարցը բարձրաձայնելուն:*

- *Խմբի թեման նույնպես իր ազդեցությունն ունեցավ՝ երեխաներին եւ մայրերին վերաբերող շարժումներն անհամեմատ*

2 facebook.com/groups/menkdemenk/
3 facebook.com/groups/maternity/

ավելի արտոնյալ վիճակում են գտնվում, քան, օրինակ, բնապահպանական շարժումները, քանի որ մայրությանը վերաբերող հարցերում դեմ դուրս եկող ուժեր գրեթե չեն լինում:

4 **«Մենք ենք այս քաղաքի տերը»**[4] երկարաժամկետ քաղաքացիական նախաձեռնություն է: Այս ցանցային շարժումը յուրահատուկ է նրանով, որ չունի նեղ խնդիր, անդրադառնում է Երեւան քաղաքում կանաչ գոտիների, ճարտարապետական եւ պատմական արժեք ունեցող շինությունների պահպանման հարցերին:

Որոնք են նման շարժումների ուժեղ կողմերը

- *Խումբը ներառում է տարբեր քաղաքական կամ քաղաքացիական հայացքներ ունեցող մարդկանց, որոնք ունեն ընդհանուր նպատակ:*
- *Շարժման մեջ ներգրավված են շատ ակտիվիստներ, որոնք պատրաստ են երկարաժամկետ գործողությունների՝ նաեւ ցանցից դուրս, իրական տարածքում:*

5 Վերջին շրջանի ամենահաջողված օրինակներից է **Թռչկանի ջրվեժի պաշտպանությանն ուղղված շարժումը**[5]: Ակտիվիստներին հաջողվեց ստիպել կառավարությանը՝ փոխել Թռչկանի ջրվեժի վերաբերյալ որոշումը եւ դադարեցնել այստեղ հէկ-ի կառուցումը:

Ինչու հաղթեց այս շարժումը

- *Բազմահազարանոց ինտերնետ համայնքն ու մի քանի տասնյակ ակտիվիստներն այս դեպքում գործեցին համատեղ. նրանք պատրաստ էին երկարատեւ բողոքի ակցիան անցկացնել հենց Թռչկանի մոտ, ծայրահեղ ծանր պայմաններում:*

4 http://on.fb.me/UN6GhO
5 http://on.fb.me/UYBflG

- *ՀԼՄ-ները ներգրավվեցին շարժման ակտիվ լուսաբանման գործում:*
- *Շարժման ակտիվիստներն օգտագործեցին ցանցային զանազան հարթակներ՝ Twitter, YouTube, շարժական սարքերի միջոցով ուղիղ հեռարձակումներ եւ այլն:*

6 «Մենք ենք այս քաղաքի տերը», Թռչկանի, Թեղուտի պաշտպանության եւ մի շարք այլ խմբեր պայքարեցին Երեւանի **Մաշտոցի պուրակում կանաչ տարածքների հաշվին խանութներ կառուցելու դեմ**: Պայքարը տեւեց մի քանի ամիս՝ ավարտվելով պուրակում խանութների ապամոնտաժմամբ:

Ինչու հաղթեց այս շարժումը

- *Շարժման մասնակիցներն օգտագործում էին ցանցի հնարավորությունները՝ թեման ակտուալ պահելու եւ նոր ակտիվիստներին ներգրավելու համար: Սակայն, մյուս կողմից, խնդիր էր դրվում երկարաժամկետ պայքար ծավալել ռեալ կյանքում, հենց Մաշտոցի պուրակում: Ցանցային եւ «օֆլայն» պայքարի անդադարությունը ամիսների ընթացքում բերեց սպասված արդյունքի:*

Հիմնական սխալները կամ ինչ չի կարելի անել ցանցային շարժումներ սկսելիս

- Facebook-ում ձեր շարժման, կազմակերպության էջը մի՛ բացեք օգտատերի տեսքով, այսինքն, որպես պրոֆայլ (profile): Դա հակասում է տվյալ սոցիալական ցանցի օրենքներին, եւ դուք ցանցից հեռացման վտանգի տակ եք գտնվելու: Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետեւյալ հղումով.

https://www.facebook.com/legal/terms?ref=pf

- Մի՛ չարաշահեք ձեր էջին միանալու (like անելու) կոչերով մարդկանց համոզելու հնարավորությունը: Դա կարող է շատերին վանել ձեզանից:
- Մարդկանց ձեր խմբում ներառելիս՝ նախ թույլտվություն հարցրեք: Առանց հարցնելու կարելի է խմբում ներառել միայն այն մարդկանց, ովքեր ձեզ հայտնի են որպես համակիրներ:
- Բացարձակ ժողովրդավարությունը ցանցային խմբերում բերում է բացասական հետեւանքների: Խումբը կամ էջը պետք է վերահսկվի մոդերատորների կողմից, եւ խմբի կամ էջի թեմային չվերաբերող բոլոր գրառումները պետք է հեռացվեն:

Որոնք են այն կարեւոր քայլերը, որ կարող են հաջողության բերել

- Միշտ հաշվի առեք, որ շատերը նոր են իմանում ձեր խնդրի մասին, եւ իրենց պետք է տեղեկացնել: Շատ հաճախ, Facebook-ը լավագույն տարբերակը չէ դրա համար: Գերադասելի է բացել բլոգ, որի վրա կարճ եւ հստակ ներկայացնել ձեր խնդիրը, սպասելիքները եւ այլ հարցեր, որոնք համարում եք կարեւոր: Այդ բլոգի վրա հղում տվեք ձեր ֆեյսբուքյան խմբի կամ էջի վրա:
- Կարեւոր իրադարձությունների համար բացեք առանձին «միջոցառում» (event):
- Մասնակիցներին խրախուսեք իրադարձությունների ընթացքը լուսաբանել օնլայն ռեժիմով՝ Twitter-ում, Foursquare-ում:
- Օգտագործեք շարժական սարքերի միջոցով ուղիղ եթեր դուրս գալու հնարավորությունը: Կարելի է օգտագործել Qik, Bambuser եւ այլ նմանատիպ հարթակները, որոնք թույլ են տալիս հեռուստաեթեր ապահովել համացանցում:
- Խմբերում, էջերում մոդերատորներ նշանակեք պինդ նյարդերով եւ համացանցին սովոր մարդկանց, ովքեր կկարողանան դիմագրավել ինչպես համացանցային աղբին՝ «սփամին», այնպես էլ խմբի դեմ գործող այլ խմբերի հարձակումներին:

Հայրենիք, պաշտպանի՛ր պաշտպանիդ. «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն

Ծովինար Նազարյան

«Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության անդամ: Երկար տարիներ զբաղվել է լրագրությամբ: 2011-ին Վաշինգտոնում գտնվող Հովարդի համալսարանից ստացել է մամուլագետի որակավորում: Ներգրավված է քաղաքացիական մի շարք նախաձեռնություններում: 2012թ. «Համընդհանուր իրավունքների պարգեւատրման» ժամանակ ճանաչվել է տարվա «Խիզախ կին»:
***Facebook**: /tsovinarn*
***Email**: tsovinar.nazaryan@gmail.com*

Մի շարժման նախապատմություն

Հայկական բանակում մարդու իրավունքների խախտումները, այդ թվում ոչ մարտական պատճառներով մահերը նորություն չէին, բայց երբեք հանրային ուշադրության կենտրոնում չէին եղել՝ մինչեւ 2010թ.-ը: Հուլիսի վերջին 31-ամյա լեյտենանտ Արտակ Նազարյանի սպանությունը հանրային բողոքի ալիք բարձրացրեց սոցիալական հարթակներում: Դրան անմիջապես հաջորդած 6 զինծառայողի սպանությունը Մարտունիում՝ էլ ավելի բորբոքեց հասարակության վրդովմունքը: Պաշտպանության նախարարը ստիպված էր քայլեր ձեռնարկել եւ, որպես այդպիսին, նախընտրեց հեռուստախցիկների ներկայությամբ կոլեգիայի նիստ հրավիրել եւ խիստ հանդիմանել ենթականերին:

Քսան օր անց տեղի ունեցավ մի աննախադեպ բան: Երեւանի անցումներից մեկում հայտնվեց գրաֆիտի, որ պատկերում էր աթոռին նստած «ինքնասպան» զինվոր՝ արյունը պատին, բայց ինքն աներեր՝ այդ աթոռի վրա (Տես նկար 4, էջ՝ 11): Գրաֆիտին արել էին Գարիկ Ենգիբարյանը եւ Տիգրան Ամրոյանը «Արթ լաբորատորիայից»: Այն պատին մնաց մեկուկես օր (անհայտ մարդիկ շտապել էին ջնջել), սակայն հետագայում ցուցադրվեց ՆՓԱԿ-ում, իսկ հետո դարձավ «Բանակն իրականում» («ԲԻ») քաղաքացիական նախաձեռնության բողոքի խորհրդանիշը:

«Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնությունը հիմնադրվեց քաղաքացիական ակտիվիստների «Հեղաֆորում» վերտառությամբ կոնֆերանսի ժամանակ, 2011թ.-ի ապրիլին (Տես նկար 1):

Թե՛ գրաֆիտին, թե՛ դեմ առ դեմ քննարկումները կարեւոր մեդիա միջոցներ էին, սակայն հանուն զինծառայողների իրավունքների պաշտպանության՝ մարդկանց համախմբումը եւ դրա հանրայնացումը հնարավոր դարձավ համացանցի եւ հատկապես Facebook սոցիալական ցանցի շնորհիվ:

Խումբը, որը միավորում է բանակում մարդու իրավունքներով մտահոգ քաղաքացիների, սոցիալական (առցանց եւ իրական) հարթակներում իր մասին հայտարարեց նույն՝ 2010 թվականի օգոստոս ամսին՝ համախմբելով «Եղնիկներ» զորամասում Աղասի Աբրահամյանի սպանության դեմ հանրային բողոքի ձայները: Բացվեց ֆեյսբուքյան միջոցառման էջ, որին արագորեն միացան մի քանի հազար մարդ, եւ որի շնորհիվ կառավարության մոտ տեղի ունեցավ մարդաշատ ցույց եւ երթ: Այդ ճնշման արդյունքում՝ զինդատախազն անձամբ ստանձնեց գործի քննության պատասխանատվությունը, եւ նախաքննական մարմինը հրաժարվեց ինքնասպանության վարկածից՝ գործը վերաորակելով որպես սպանություն:

Այդ պահից ի վեր, «Բանակն իրականում» նախաձեռնությունը բազմաթիվ բողոքի ակցիաներ՝ ցույցեր, պիկետներ եւ երթեր է կազմակերպել, հանդես եկել մասնագիտական ֆորումներով, ասուլիսներով եւ պաշտոնական հարցումներով՝ տեղեկություններ ստանալով եւ տարածելով ինչպես բերնեբերան, այնպես էլ սոցիալական ցանցերով, էլեկտրոնային փոստով եւ լրատվամիջոցներով:

Ովքեր են եւ ինչ են ուզում

«Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնությունը միավորում է անհատների, ովքեր մտահոգ են զինծառայողների իրավունքների ոտնահարման փաստերով, որոնք հանգեցնում են հայկական բանակում բռնությունների, նվաստացումների եւ այլ հանցագործությունների՝ երբեմն ավարտվելով մահացության դեպքերով: Խումբը ձգտում է այնպիսի բարեփոխումների, որոնց արդյունքում կբացահայտվեն եւ կպատժվեն կատարված հանցագործությունների իրական մեղավորները՝ կանխարգելիչ գործոն դառնալով նոր հանցագործությունների համար:

«Բանակն իրականում»-ն իր առաքելությունն է համարում՝ բացառել ոչ մարտական պատճառներով մահերը զինված ուժերում, եւ հասնել զինծառայողների համար արժանապատիվ ծառայության պայմանների ապահովմանը:

2

Նախաձեռնության անդամներն ամենատարբեր մասնագիտությունների տեր կանայք եւ տղամարդիկ են, հիմնականում՝ միջինից ցածր տարիքի: Նախաձեռնության կարեւոր մասն են կազմում նաեւ զոհված զինծառայողների ծնողները, ովքեր տարիներ ի վեր տարբեր միջոցներով պայքարում են իրենց որդիների մահվան հանգամանքները բացահայտելու եւ արդարադատության հասնելու համար, այդ թվում ամեն հինգշաբթի օր Կառավարության շենքի մոտ բողոքի ակցիա անելով (Տե՛ս նկար 2), որին հիմնադրման պահից միանում են նաեւ «Բանակն իրականում» խմբի ակտիվիստները:

Նախաձեռնությունը ֆորմալ կառուցվածք չունի: Ներկայացուցիչներից ոմանք անդամակցում են իրավապաշտպան եւ այլ հասարակական կազմակերպությունների, որոնց ռեսուրսներով (տարածք, համակարգչային տեխնիկա, տրանսպորտ եւ այլն) երբեմն աջակցում են խմբի գործողություններին: Խմբին հարող վերոհիշյալ կազմակերպությունների շարքում են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Հելսինկյան ասոցիացիան, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ», «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» եւ այլ կազմակերպություններ: Սակայն անդամները խմբին միացել են անհատապես եւ կամավորության սկզբունքով:

Բյուջե, որպես այդպիսին, չկա. անհրաժեշտության դեպքում խմբի անդամներն իրենց անձնական միջոցներից փոքրիկ գումարներ են

նվիրաբերում, կամ խումբը ֆեյսբուքյան միջոցառմամբ հայտարարում է հանգանակություն, որին միանում են նաեւ տվյալ նպատակին աջակցել ցանկացող քաղաքացիներ: Միաժամանակ, համեմատաբար մեծ գումարների նվիրատվության հայտերը խմբին ստիպում են մտածել հաշվեհամարի եւ բյուջեի ձեւավորման մասին:

Հաղորդակցման միջոցները

3

Ինչպես գրեթե բոլոր քաղաքացիական նախաձեռնությունները, «Բանակն իրականում» խումբն իր գործունեության մեջ լայնորեն կիրառում է մեդիա միջոցներ, հատկապես՝ զանգվածային հաղորդակցության այնպիսի ժամանակակից միջոցներ, ինչպիսիք ինտերնետային հարթակներն են: Ինչպես ասվեց վերեւում, խումբն իր մասին «Բանակն իրականում» անունով առաջին անգամ ազդարարեց Facebook սոցիալական ցանցում՝ բացելով համանուն վիրտուալ «բաց խումբ», որի անդամների թիվը շուտով բազմապատկվեց (Տե՛ս նկար 3):

Ի տարբերություն այլ խմբերի, «ԲԻ»-ն առանց հարցնելու՝ որեւէ մեկին չի ընդգրկել խմբում. անդամագրումը կատարվում է օգտատերերի դիմումների հիման վրա: Ավելի ուշ բացվեց նաեւ համանուն ֆեյսբուքյան «էջ», որը վերահսկվում է ադմինների կողմից, թարմացվում է նորություններով, բայց «բաց խումբն» է շարունակում ծառայել որպես աշխույժ քննարկումների հարթակ, քանի որ այն բաց է բոլոր անդամների գրառումների համար:

«Բանակն իրականում» ֆեյսբուքյան խմբից օգտվելու կանոններ[1]

- *Խմբի անդամ կարող են դառնալ բոլոր նրանք, ովքեր կիսում են «Բանակն իրականում» նախաձեռնության նպատակները եւ մտահոգությունները՝ բանակում ահագնացող բռնությունների, սպանությունների եւ անպատժելիության մթնոլորտի մասին:*
- *Խմբի անդամ կարող են դառնալ միայն իրենց անուն ազգանունով ներկայացող օգտատերերը. բացառություն կարող են լինել այլ անունով ներկայացող այն օգտատերերը, ում ԱՆՁԱՄԲ ճանաչում է ադմիններից գոնե մեկը:*
- *Խմբի անդամները պետք է հարգալից լինեն խմբի մյուս անդամների նկատմամբ՝ թեկուզ ամենադժվար թեման քննարկելիս:*
- *Խմբի էջում կարող են «փոստ» արվել միայն խմբի թեմայից եւ նպատակներից բխող լուրեր, ստատուսներ եւ մեկնաբանություններ:*
- *Խմբում «փոստ» արվող լուրերը կարող են հեռացվել ադմինների կողմից, եթե խախտում են էթիկան՝ խմբի անդամների, բանակի զոհերի եւ նրանց ընտանիքների նկատմամբ:*
- *Խմբում «փոստ» արվող ստատուսներն ու մեկնաբանություններն անվերապահորեն կհեռացվեն էջից, իսկ դրանց հեղինակներն անմիջապես կհեռացվեն խմբից եւ կարգելափակվեն, եթե խախտում են էթիկան՝ բանակի զոհերի եւ նրանց ընտանիքների նկատմամբ:*
- *Խմբի անդամները կհեռացվեն խմբից նաեւ այն դեպքում, եթե իրենց անձնական էջում, ֆեյսբուքյան այլ էջերում կամ հրապարակային այլ հարթակներում անհարգալից արտահայտվեն «Բանակն իրականում» նախաձեռնության, զոհերի եւ նրանց ընտանիքների հասցեին:*
- *Խմբում արգելվում է քաղաքական-կուսակցական քարոզչությունը:*
- *Խմբում արգելվում են մարդատյացության եւ խտրականության դրսեւորումները:*
- *Խմբում արգելվում է «ֆեյքերի» եւ «բոտերի» մուտքն ու «տրոլինգը»:*

Սկզբնական շրջանում քննարկումներն այնքան թեժ էին լինում, որ կարիք եղավ սահմանել «համակեցության» կանոններ, որոնք կզսպեին անհավասարակշիռ եւ անձնականացված խոսքակռիվները: Այդ կանոնները կարող են ընդօրինակվել եւ կիրառվել նաեւ այլ խմբերում: Կանոնների խախտման հետեւանքով հատուկենտ օգտատերեր են հեռացվել խմբից: Մասնավորապես, մի հայտնի բլոգեր հեռացվեց խմբից, այն բանից հետո, երբ իր պատին անհարգալից արտահայտվեց «ԲԻ» խմբի անդամների

1 facebook.com/groups/armyinreality/members/

մասին: Կանոնների պահպանմանը հետեւում են մոտ երկու տասնյակ ադմիններ, թեեւ անախորժություններից լիովին ապահովագրվել հնարավոր չէ:

«Բաց խումբը» հիմնականում գործում է որպես տեղեկությունների եւ գաղափարների փոխանակման հարթակ: Այն արդեն ճանաչված է հասարակության շրջանում, եւ երբեմն իրավախախտումների մասին տարբեր հաղորդումներով դիմում են խմբի ակտիվ անդամներին: Խմբին հետեւում են նաեւ զինծառայությանն առնչվող գերատեսչություններին հարող մարդիկ: Դեպք եղավ, երբ զինծառայողի եղբայրը «ԲԻ» բաց խմբում տեղադրեց հրատապ տեղեկություն բարձրաստիճան հրամանատարի կողմից մի զորամասում ապօրինի եւ ստորացուցիչ հրամաններ տալու մասին: Ճիշտ է, ադմինները կարճ ժամանակ անց այդ գրառումը հեռացրեցին եւ վերստին տեղադրեցին իրենց անունից, բայց, ցավոք, գրառման հեղինակի անունն արդեն հայտնի էր դարձել եւ թույլ տվել պարզել զորամասից այդ տեղեկության արտահոսքի հեղինակի ինքնությունը, ինչի հետեւանքով վերջինիս 15-օրյա կալանք էին տվել՝ պատրվակ բռնելով նրա կողմից զորամասում հեռախոս պահելու փաստը:

Դրանից հետո խմբի ադմինները մի քանի անգամ զգուշացնող գրառումներ արեցին, որ տեղեկությունների աղբյուրներին չվտանգելու համար՝ օգտատերերն իրավախախտումների մասին հաղորդումները խմբին փոխանցեն վստահելի անձանց միջոցով: Այդ զգուշացումը մշտապես տեսանելի պահելու նպատակով այն տեղադրվեց խմբի «գլխագրում»: Զգուշացումը տեղադրելիս մենք նկատի էինք առել ոչ միայն հնարավոր վտանգները, այլ նաեւ վախի մթնոլորտը, ինչի պատճառով մարդիկ հաճախ հրաժարվում են սեփական իրավունքների պաշտպանությունից: Սակայն, ուրախալի էր ականատես լինել փաստին, որ, հակառակ մեր մտահոգությունների, մի զինծառայող հենց իր անունով տեղադրեց իր նկատմամբ բռնության մասին տեղեկություն՝ օգնություն խնդրելով, որ արդարությունը վերականգնվի: «ԲԻ» խմբին հարող Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը սկսեց զբաղվել խնդրով, հայտարարություն տարածեց, ինչից հետո բռնություն գործած սպան ձերբակալվեց:

Գործողություններ նախաձեռնելիս՝ ակտիվ անդամները, ովքեր մի քանի տասնյակի են հասնում, օգտագործում են եւ ինտերնետային կապի միջոցներն ու ֆեյսբուքյան հարթակը, եւ անձնական հանդիպումներն ու ժողովները, որտեղ որոշումներն ընդունվում են մասնակցային քննարկումների արդյունքում: Խումբն էլեկտրոնային փոստով ծանուցումներ, տեղեկություններ եւ հայտարարություններ է ուղարկում լրատվամիջոցներին եւ այլ հասցեատերերի: Այդ տեղեկատվությունն, իհարկե, տարածվում է նաեւ սոցիալական ցանցերում՝ խմբի անդամների

միջոցով: Օգտագործվում է նաեւ սովորական փոստը՝ պաշտոնական նամակագրության համար:

«Բաց խմբում» տեղադրված է մոտ 70 փաստաթուղթ[2]՝ այդ թվում «Բանակն իրականում» նախաձեռնության հայտարարությունները, իսկ մեծ մասամբ դրանք տեղեկանքներ են՝ ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների գործերով: Այդ նյութերը հաճախ օգտագործվում են լրագրողների կողմից: Խմբի բլոգը նոր է եւ դեռ ակտիվացված չէ: «Բանակն իրականում» խումբն էջ ունի նաեւ YouTube-ում[3], որտեղ կարելի է դիտել զինծառայողների կյանքի իրավունքի խախտման առանցքային գործերով տեսանյութեր:

Թեեւ ընդունված պատկերացման մեջ մեդիա են համարվում լրատվամիջոցները, իսկ վերջերս նաեւ՝ ինտերնետը, սակայն հարկ է այդ ցանկում ընդգրկել նաեւ այլ մեդիա-միջոցներ, որոնք ասելիք են հաղորդում փոքր ու մեծ լսարաններին: Այդպիսին պետք է դիտարկել նաեւ վերոհիշյալ «Ինքնասպան զինվոր» գրաֆիտին, ցույցերի եւ երթերի ժամանակ օգտագործվող պաստառները եւ հենց ցույցերն ու երթերը: Դրանք միջոցներ են, որ համեմատաբար մեծ լսարանների ուշադրություն են գրավում եւ՛ ուղղակիորեն, եւ՛ լրատվամիջոցներով: Բացի նախաձեռնության գործունեության լուսաբանումից, «Բանակն իրականում»-ը լրատվամիջոցներում ներկայացվում է նաեւ ակտիվիստների հարցազրույցների միջոցով: Նրանց ֆեյսբուքյան ակտիվությունը նույնպես ազդում է լրատվական օրակարգի վրա: Ճիշտ է, որեւէ միջոցառման կազմակերպում սկսվում է ֆեյսբուքյան միջոցառման էջի ստեղծումից, բայց լրատվամիջոցների լուսաբանման շնորհիվ խմբի պլանավորած եւ արդեն իրականացրած գործողությունների մասին բազմաթիվ անգամ ավելի շատ մարդիկ են տեղեկանում:

Պետք է, սակայն, նկատել, որ ի տարբերություն մասնագիտական կազմակերպությունների, խմբում այս աշխատանքները կատարվում են անդամների կամավոր հանձնառությամբ, ինչից հաճախ տուժում է դրանց համակարգվածությունն ու արդյունավետությունը: Երբ աշխատանքների հստակ բաշխում է կատարվում, արդյունավետությունն ավելի բարձր է լինում: Մեկ այլ կարեւոր հանգամանք է այն, որ Facebook-ն օգտագործվում է ոչ միայն որպես ակտիվության հարթակ, այլ նաեւ որպես գործիք, որը հնարավորություն է տալիս իրականացնել «օֆլայն» ակտիվություն:

2 facebook.com/groups/armyinreality/files/

3 bit.ly/VFIKQS

Խնդիրները բանակում

Մինչեւ վերջերս ընդունված է եղել ասել, որ հայկական բանակը Հայաստանի Հանրապետության ամենակայացած կառույցներից մեկն է: Սակայն ինչ-որ պահից աճեց հանրային գիտակցությունը, որ խնդիրները թաքցնելիս՝ դրանք բազմապատկվում են, ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել՝ դրանց հարուցիչները վերացնելու համար: Հակառակ դրան, յուրաքանչյուր զորացրվող զինվոր իր տուն եւ շրջապատ է բերում բանակային կյանքի մասին իրական վկայություններ, որոնք լի են բռնությունների, նվաստացման, կոռուպցիայի եւ այլ հանցագործությունների մասին նկարագրություններով: Տարեկան տասնյակ ոչ մարտական մահերը բացահայտում են բանակում տիրող բարքերի բնույթը եւ տագնապ առաջացնում այն մարդկանց մեջ, ովքեր զորակոչի ենթակա կամ արդեն զորակոչված որդիներ ունեն:

Իրավապահ կառույցները պատշաճ քննության չեն ենթարկում զինված ուժերում տեղի ունեցող հանցագործությունները, իսկ մահվան ելքով բռնությունները մեծ մասամբ որակում են որպես դժբախտ պատահար կամ ինքնասպանություն: Ընդ որում, մահվան վարկածները մեծ մասամբ հավատ չեն ընծայում զոհվածների ընտանիքներին, քանի որ քննությունը կատարվում է հանցագործության հետքերի լղոզման ճանապարհով. օրինակ, որպես կանոն, «ինքնասպանության» գործիքների վրա (ածելի, հրազեն) մատնահետքեր չեն հայտնաբերվում:

Այդ պայմաններում անսպասելի չէ, որ զոհվածների շատ ընտանիքներ շարունակում են պայքարը իրենց որդիների մահվան իրական հանգամանքները բացահայտելու համար, թեեւ դատարանները հաստատում են զինվորական դատախազության վերահսկողությամբ՝ պաշտպանության նախարարության քննչական ծառայության վարած նախաքննության արդյունքները:

Հանցագործությունների կոծկումը զինված ուժերում հանգեցնում է անպատժելիության եւ ամենաթողության մթնոլորտի, որի հերթական զոհը կարող է լինել յուրաքանչյուր զինծառայող: «Բանակն իրականում» խմբի ակտիվիստները եւ իրենց որդիների գործերի բացահայտման համար պայքարող ծնողները ոչ միայն արդարություն են փնտրում՝ որ մեղավորները բացահայտվեն ու պատժվեն, այլ նաեւ որպեսզի կանխարգելվեն նոր բռնություններն ու սպանությունները: «Զավակիս հետ չեմ բերի, բայց գոնե ուրիշ զինվորներ չեն արժանանա նրա ճակատագրին»,- ասում են շատերը:

Վիդեոն ինտերնետում

Ազդեցիկ գործիք ակտիվիստների համար



Գեղամ Վարդանյան

Կրթությամբ ֆիզիկոս, մասնագիտությամբ՝ լրագրող: Աշխատում է Սամուլի աջակցության Ինտերնյուս հասարակական կազմակերպությունում, www.media.am կայքի պրոդյուսերն է: Սոցիալական մեդիա դասընթացավար:
***Facebook**: /gegham.vardanyan*
***Twitter**: @reporter_arm*
***Blog**: http://reporter-arm.livejournal.com/*

Ինտերնետի տարածմանը եւ արագությունների աճմանը զուգընթաց՝ վիդեոն ինտերնետում, որպես իրավունքների պաշտպանության գործիք, ավելի ու ավելի շատ է օգտագործվում:

Հայաստանում քաղաքացիական կամ քաղաքական ակտիվիստների պատրաստած վիդեոնյութերի տարածումը սկսվել է 2008թ.-ից: Այն տարիներին Հայաստանում ինտերնետը դեռ բավականաչափ տարածված չէր, ինտերնետ արագություններն էլ բարձր չէին: Երբեմն հարկավոր էր լինում 10 րոպե սպասել YouTube-ում 5 րոպեանոց տեսանյութ դիտելու համար:

2008թ.-ի նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցող բողոքի ցույցերի, հանրահավաքների ու երթերի մասին տեսանյութերի տարածման հիմնական հարթակը YouTube-ն էր: Տեսանյութեր էին նկարահանում եւ ինտերնետով տարածում ինչպես ցանցային

լրատվամիջոցները, (հատկապես «Ա1+»-ը) այնպես էլ անհատները՝ ընդդիմության կամ իշխանության կողմնակիցները, բլոգերները:

2008թ.-ի մարտի 1-ի ամբողջ օրվա եւ մարտի 2-ի լույս գիշերվա բախումների մասին տեսանյութերը նույնպես տարածվում էին YouTube-ի օգնությամբ: Այն ժամանակ հեռուստատեսային եթերը հիմնականում փակ էր ընդդիմության կողմնակիցների համար: Ընդդիմությունն իր համար, մասնավորապես YouTube-ի օգնությամբ, սեփական մեդիա էր ստեղծել:

2008թ.-ին հայաստանյան քաղաքական պայքարի մասին տեսանյութերի տարածումը երկու առանձնահատկություն ուներ: **Նախ**, տեսանյութերն առաջին հերթին տարածվում էին խտասկավառակների (DVD) միջոցով: Ինտերնետը քիչ էր տարածված, եւ նպատակահարմար էր ուղղակի որեւէ կրիչով տեսանյութը հասցնել օգտատիրոջ տուն: **Երկրորդ**, բջջային հեռախոսներով նկարահանված տեսանյութերը տարածվում էին blutooth տեխնոլոգիայի կիրառմամբ՝ հեռախոսից հեռախոս: Սա էլ ինտերնետի ոչ բավարար տարածվածության եւ թույլ արագությունների պարագայում էր:

2008թ. մարտի 1-ի գործը

2008 թվականի մարտի 2-20-ին հայտարարված արտակարգ դրության օրերին Youtube-ում տեղադրված մի տեսանյութ դարձավ ոստիկանության հատուկ ասուլիսի քննարկման առարկա: Հանրային հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրում բարձրաստիճան ոստիկաններ երկար խոսում էին հենց այդ տեսանյութի մասին, որում երեւում էր, թե ինչպես ցուցարարների հետ գիշերային բախումների ժամանակ ոստիկանների ավտոմատներից հորիզոնական ուղղությամբ կրակ է բացվում: Մինչեւ այդ տեսանյութի ի հայտ գալը՝ պաշտոնապես հայտարարվում էր, որ ոստիկանները օդ են կրակել:

Հայաստանում առաջին անգամ էր ոչ պաշտոնական տեսանյութը, որը տարածվել էր ոչ թե ավանդական, այլ նոր մեդիայի օգնությամբ, իշխանությունների այդօրինակ ուշադրությանն արժանանում: YouTube-ում տեղադրված այս հոլովակը տասնյակ հազարավոր դիտումներ ունեցավ, որոնք աճեցին հեռուստատեսային անդրադարձներից հետո: Չլիներ YouTube-ը, այս տեսանյութը հատուկ ասուլիսի ու հասարակական քննարկումների նյութ չէր դառնա:

1

Մարտի 1-ի իրադարձությունների մասին պատմող տեսանյութերն ինտերնետում բազմաթիվ են: Դրանցից շատերը տարածվեցին արդեն արտակարգ դրության ավարտից հետո եւ մարտի 1-ի դեպքերի յուրօրինակ վավերագրության վերածվեցին (Տես նկար 1):

Հայաստանում ընդդիմությունը շարունակեց օգտագործել տեսանյութերի ներուժը: 2008-2009թթ. ընդդիմության բոլոր հանրավաքների, ընդդիմությանն աջակցող երիտասարդ ակտիվիստների ակցիաների մասին տեսանյութերը տարածվում էին YouTube-ով:

2010թ. բանակային տեսանյութը

2010թ.-ին, երբ Հայաստանում ինտերնետն արդեն բավականաչափ տարածում ուներ, YouTube-ով տարածված տեսանյութերը սկզբում երկար քննարկվում էին սոցիալական ցանցերում, հատկապես Facebook-ում, հետո էլ տեղափոխվում էին ավանդական մեդիա՝ թերթեր, այդ թվում՝ առցանց, հեռուստատեսություն եւ այլն:

2012թ.-ին բանակում զինվորների նկատմամբ ուժի կիրառման ապացույց հանդիսացող տեսանյութը տարածվեց նախ YouTube-ով, հետո քննարկվեց Facebook-ում, դարձավ հոդվածների, ինտերնետային հրապարակումների, ռադիոռեպորտաժների ու հեռուստատեսային նյութերի թեմա: Բջջային հեռախոսով նկարահանված տեսանյութում սպան ծաղրում է երկու զինվորի, նսեմացնում է նրանց արժանապատվությունը: Տեսանյութի հիմքով քրեական գործ հարուցվեց, պատժվեց մեղավոր

զինվորականը: Սկանդալային տեսանյութի գործով հետաքննությունը, բանակում սպաների եւ զինվորների փոխհարաբերությունները՝ երկար ժամանակ գլխավոր թեմաներ մնացին ավանդական եւ նոր մեդիայում: Օգտագործելով սովորական բջջային հեռախոսը եւ Youtube-ը՝ տեսանյութի հեղինակն ու այն տարածողները նպաստեցին մեկ գործով արդարության վերականգնմանը:

http://bit.ly/QkDfUQ

2011թ. ուղիղ եթերն ինտերնետով

2011-ից սկսած՝ Հայաստանում ինտերնետի շուկան էականորեն փոխվել է: Ինտերնետի արագությունները թույլ են տալիս ոչ միայն արագորեն տեսանյութ ներբեռնել YouTube, այլ նաեւ ինտերնետով ուղիղ եթեր ապահովել: Դեռեւս 2009-ին «Ա1+» հեռուստաընկերությունը փորձարկում էր բջջային հեռախոսի օգնությամբ Qik հարթակով ընդդիմության հանրահավաքների հեռարձակումը: Հիմա արդեն Հայաստանի ցանցային լրատվամիջոցներն ինտերնետում հեռարձակում են գրեթե բոլոր հետաքրքիր քաղաքական, մշակութային իրադարձությունները, քաղաքացիական ակցիաները: Հիմնականում օգտագործվում է Livestream հարթակը:

2011-ի մարտ ամսին ինտերնետով ուղիղ եթեր ապահովեց հասարակական կազմակերպությունը՝ Գյումրիում գործող «Ասպարեզ» ժուռնալիստների ակումբը: Վրաստանից ներկրվող մեքենաների սեփականատերերի՝ Գյումրիի կենտրոնական փողոցներում ընթացող բողոքի ակցիան հեռարձակվում էր Ustream հարթակի օգնությամբ (Տե՛ս նկար 2): Սա առաջին դեպքն էր, երբ քաղաքացիական բողոքի ակցիան ինտերնետում հեռարձակվում էր ոչ թե լրատվամիջոցի, այլ հասարակական կազմակերպության կողմից:

http://www.asparez.am/ustream/

Ինտերնետում ուղիղ եթերը Հայաստանում բնապահպանական շարժումների լուսաբանման մշտական գործիքներից է: «Դեպի Թեղուտ» բնապահպանական ակցիան հենց իրենց՝ ակտիվիստների ջանքերով ամբողջությամբ հեռարձակվում էր ինտերնետում: Մաշտոցի պուրակի երկարատեւ պայքարի ժամանակ ինտերնետում միաժամանակ մի քանի ալիքներով հեռարձակումներ էին կազմակերպվում: Ցանցային լրատվամիջոցներն առանձին էին հեռարձակում, ակտիվիստներն՝ առանձին:

2

YouTube-ի օգնությամբ տարածվող տեսանյութերը տարիների ընթացքում դառնում են շատ ավելի լավ մտածված եւ մշակված: Քաղաքացիական ակտիվիստները սովորում են գրագետ տեսանյութեր նկարել, ճիշտ մոնտաժել, երաժշտության եւ տեքստի համադրմամբ՝ դրանք վերածելով քաղաքացիական արշավի կարեւոր գործիքների:

Գործիքներ

Քաղաքացիական ակտիվիստները, հասարակական կազմակերպությունները լրատվական արշավներ կազմակերպելիս մեծ ուշադրություն են դարձնում տեսանյութին: Պատճառները պարզ են.

- Տեսանյութ ստեղծելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները թանկ չեն:
- Ինտերնետում տեսանյութերը տարածելն անվճար է:
- Ազդեցիկ տեսանյութն ինտերնետում քննարկումների ու նոր կողմնակիցներ ներգրավելու հարմար գործիք է:

Հասարակական կազմակերպություններն ու քաղաքացիական ակտիվիստների խմբերը սովորաբար ունենում են իրենց սեփական փոքրիկ տեսախցիկները, տեսանյութը մոնտաժելու համար գործիքները, YouTube կամ Vimeo ալիքները, պաշտոնական կայքերում ավելի ու ավելի շատ են **տեսանյութ** բաժինները կամ YouTube-ի պատուհանով **սեգմենտները**:

Տեսանյութը լրատվական արշավի մաս դարձնելուց առաջ՝ ճիշտ կլինի նախ տեսանյութի ստեղծման դասընթաց անցնել: Եթե նման հնարավորություն չկա, կամ դասընթացից ստացած գիտելիքները խորացնելու խնդիր կա, կարելի է օգտվել օնլայն ռեսուրսներից:

Կանադական Witness կազմակերպությունը մասնագիտացել է քաղաքացիական ակտիվիստների համար տեսանյութի ստեղծման հմտությունների դասընթացներ կազմակերպելու գործում: Նրանց կայքում գործում է օգտակար խորհուրդների մշտապես թարմացվող բազա:

http://toolkit.witness.org/

YouTube-ի այլընտրանք Vimeo հարթակը տեսանյութերի ստեղծման օնլայն տեսադասերի համար հատուկ կայք է ստեղծել:

http://vimeo.com/videoschool

Այստեղ առաջարկների հարուստ պաշար կա. խորհուրդներ սկսնակներին, տեսանկարահանում, լույս, ձայն, տեսանյութի խմբագրում:

Հայաստանում հասարակական կազմակերպությունների կողմից սիրողական մակարդակում տեսանյութ մոնտաժելու ամենատարածված ծրագիրը VideoPad-ն է:

http://www.nchsoftware.com/videopad/index.html

Այն հարմար եւ պարզ է օգտագործման համար, ունի վճարովի եւ անվճար տարբերակներ: 2-3 րոպեանոց տեսանյութ կամ լուսանկարներով սլայդշոու ստեղծելու համար VideoPad-ը շատ հարմար է: Ավելի երկար տեսանյութեր, փոքրիկ վավերագրական ֆիլմեր ստեղծելիս՝ հասարակական կազմակերպությունների համար արդեն ճիշտ կլինի համագործակցել պրոֆեսիոնալների հետ:

YouTube-ում տարածվող հեղինակային տեսանյութեր ստեղծելու համար կարելի է օգտագործել հենց իր՝ YouTube-ի վիդեո խմբագրման ծրագիրը, http://www.youtube.com/editor, ինչպես նաեւ կայքում ինտեգրված բազմազան մոնտաժային եւ սլայդշոուների ստեղծման ծրագրերը:

http://www.youtube.com/create

Լուսանկարը սոցիալական ցանցերում

Ինֆորմացիայի տարածման արդյունավետ ձեւ

Facebook-ում հասարակական մի քանի նախաձեռնությունների օրինակով

Արայիկ Հարությունյան

Սոցիալական ցանցերը եւ նոր մեդիաների այլ տեսակները շատ հաճախ կարեւոր նշանակություն ունեն ինչպես հասարակական-քաղաքական այս կամ այն նախաձեռնության, այնպես էլ կոմերցիոն եւ ոչ կոմերցիոն ձեռնարկների մասին տեղեկացնելու, նրանց գործունեությունը լուսաբանելու համար:

Այս առումով, սոցիալական ցանցերի էջերում լուսանկարների ճիշտ օգտագործումը կարող է նպաստել տվյալ նախաձեռնության կամ բրենդի առաջխաղացմանը: Սոցիալական ցանցերն այսօր տալիս են նման բազմաթիվ հնարավորություններ: Լուսանկարի՝ ժամանակին տեղադրումը թույլ է տալիս ապահովել ավելի մեծ հաճախելիություն տվյալ էջի, իսկ սոցիալական ցանցերի միջոցով՝ նաեւ կայքերի համար:

Աշխարհի ամենամեծ սոցիալական ցանցը՝ Facebook-ը, լուսանկարի օգտագործման բազմաթիվ նոր հնարավորություններ է ստեղծում օգտատերերի համար: Նրանք միլիարդավոր դոլարներ են ծախսում այս գործիքի օգտագործման նոր պլատֆորմներ ստեղծելու համար: Պատահական չէ, որ Facebook-ը 2012-ին գնեց լուսանկարները համացանցում անվճար տեղադրելու Instagram հավելվածը, որի համար վճարեց 1 միլիարդ դոլար: Սա խոսում է այն մասին, որ սոցիալական ցանցի հետագա զարգացման գործում մեծ կարեւորություն է տրվում այս

գործիքին: Այս հավելվածները թույլ են տալիս նաեւ մշակել լուսանկարները, ստեղծել կոլաժներ, լուսանկարներն ուղեկցել մեկնաբանություններով, ինչն ավելի արդյունավետ է դարձնում այս գործիքի կիրառումը: Նույնիսկ Twitter սոցիալական ցանցը, որը ժամանակին թույլատրում էր միայն 140 նիշ պարունակող գրառումներ, այսօր արդեն հնարավորություններ է ստեղծում, որպեսզի օգտատերերի լրահոսում երեւան մեծ լուսանկարներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր Twitter-ի հրապարակումների ավելի քան 1/3-ը լուսանկարներ են: Բացի այդ, Facebook-ում լուսանկարների հավանումների («like-երի») թիվը երկու անգամ գերազանցում է մյուս հրապարակումների հավանումներին:

Մեր ուսումնասիրությունները եւ տարբեր էջերի կառավարիչների (ադմինների) հետ զրույցները թույլ են տալիս փաստելու, որ հսկայական տարբերություն կա նյութը լուսանկարի միջոցով եւ առանց դրա՝ թիրախային խմբերին հասցնելու առումով: Կայքից վերցված հղումը սոցիալական ցանցում ավելի արդյունավետ է, երբ այն ուղեկցվում է նույնիսկ փոքր լուսանկարով: Դիտարկումները ցույց են տալիս, որ սոցիալական ցանցերի կողմից այս կամ այն կայքի համապատասխան կոդերը չճանաչելու եւ հղումն ուղեկցող լուսանկարի՝ սոցիալական ցանցում հրապարակելու անհնարինության դեպքում կտրուկ նվազում է տվյալ կայքի կամ էջի հաճախելիության ցուցանիշը:

1

Նոր տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում յուրաքանչյուր ոք, նույնիսկ ամենավատ հեռախոսն ունենալու դեպքում, լուսանկարելու եւ սոցիալական ցանցերում դրանք տեղադրելու հնարավորություն ունի: Սա ավելի է հեշտացնում հասարակական լայն հնչեղություն ունեցող հարցերին ավելի մեծ տարածում ապահովելը, քանի որ համացանցից, ընդհանրապես, եւ, մասնավորապես, սոցիալական ցանցերից օգտվողների թիվը Հայաստանում եւ աշխարհում գնալով աճում է:

Նույն խմբերի էջերի դիտարկումները ցույց են տալիս, որ ֆոտոռեպորտաժների տեղադրումը շատ հաճախ ավելի լուրջ ազդեցություն է ունենում, քան՝

2

տվյալ իրադարձության վերաբերյալ ընդարձակ հոդվածներն ու նոթերը: Այդ լուսանկարներն ավելի արագ են տարածվում համացանցում, դրանցով նյութերն ավելի արագ են հայտնվում տարբեր օգտատերերի պատերին: Բացի այդ, սոցիալական կայքերում հնարավորություն կա նկարների միջոցով պատմել աշխարհագրական յուրաքանչյուր վայրում տվյալ նախաձեռնության կամ դրա համատեքստում տեղի ունեցող զարգացումների մասին:

Հայաստանում գործող շատ հասարակական-քաղաքական նախաձեռնություններ նույնպես օգտվում են այս հնարավորությունից:

Օրինակ, վերջերս Խոսրովի անտառում տեղի ունեցող ապօրինությունների մասին պատմող ընդամենը մեկ նկար լուրջ արձագանք առաջացրեց սոցիալական ցանցերում եւ պետական համապատասխան մարմիններին ստիպեց անդրադառնալ այդ խնդրին (Տես նկար 1):

Թեղուտի պայքարի դեպքում մեկ լուսանկարը բավարար էր, որպեսզի ապացուցվեր, որ տեղի բնակչության կողմից արտադրվող մեղրը բավարար է նրանց համապատասխան եկամուտներն ապահովելու եւ բնությունը չապականելու համար (Տես նկար 2):

Լուսանկարներն ու ռեպորտաժները դարձան Երեւանի Մաշտոցի պուրակում ապօրինի շինարարությունների դեմ պայքարի կարեւոր տարրերից մեկը: Շուրջօրյա նստացույցերի վերաբերյալ հազարավոր

լուսանկարներ արագ տարածվում էին համացանցում, ինչպես հանրությանն այդ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովելով, այնպես էլ տարբեր զարգացումների դեպքում դառնալով նախաձեռնության շուրջ համախմբման արդյունավետ միջոց (Տես նկար 3):

Հաջողված նկարները երբեմն դառնում են տվյալ շարժման կամ նախաձեռնության խորհրդանիշը կամ զուգորդվում դրա հետ:

3

Հրապարակային հաշվետվություն կամ հանրային առցանց վերահսկողություն

Արթուր Ավթանդիլյան

Կրթությամբ միջազգային հարաբերությունների մագիստրոս է: Ներգրավված է մի շարք քաղաքացիական նախաձեռնություններում: Եղել է «Մենք ենք այս քաղաքի տերը» շարժման նախաձեռնող խմբի անդամ:
***Facebook**: /arthur.avtandilyan*
***Twitter**: @artavt*
***Email**: a.avtandilyan@gmail.com*

Համացանցի հայկական տիրույթում տվյալների հավաքագրումն ու դրանք խմբավորված բազայի տեսքով ներկայացումը բավականաչափ նոր երեւույթ է՝ պայմանավորված հետեւյալ հանգամանքներով.

- համացանցի հասանելիության բարձրացում (հատկապես դյուրակիր տեխնիկական միջոցների հաշվին),
- բազմատեսակ տվյալների լայն թվայնացում (մասնավորապես, պաշտոնական գրագրության, E-governance-ի տարրերի ներառում),
- քաղաքացիական ակտիվության, հետեւաբար եւ հասարակական հաշվետվողականության մեծացում (հատկապես վիրտուալ՝ սոցցանցային տիրույթում):

Հանրային առցանց վերահսկողության միջոցները՝ ըստ տվյալների սկզբնական հավաքման ուղղության, խիստ պայմանականորեն կարելի է բաժանել երկու տեսակի:

- Տվյալների հավաքմանն անմիջականորեն մասնակցում է հանրությունը, ապա դրանք մշակվում են, խմբավորվում, վերլուծության ենթարկվում եւ կրկին ներկայացվում հանրությանը (Crowdsourcing):
- Տվյալները հավաքվում, մշակվում եւ ամբողջական ներկայացվում են հանրությանը ռեսուրսի/նախաձեռնության/նախագծի հեղինակների կողմից:

Ըստ գործառնության առաջնային հարթակների՝ այդ միջոցները կարելի է բաժանել կայքերի («արտասոցցանցային»)՝ տարբեր տեսակի հետազոտական կայքեր եւ սոցցանցային ռեսուրսներ, որոնք հիմնականում տարատեսակ քաղաքացիական նախաձեռնություններն են:

Քանի որ հաջորդ նյութերից մեկում ներկայացվելու է Crowdsourcing-ը, այստեղ հիմնական շեշտը կդրվի երկրորդի տարբեր կողմերի դիտարկման վրա:

Հանրային հետաքրքրություն ներկայացնող տվյալներ հավաքող եւ մշակող նախագծերից է 2011թ. հիմնված ParliamentMonitoring.am-ը, որը մասնագիտացած է ՀՀ ԱԺ պատգամավորների գործունեության տարբեր ոլորտների (քվեարկություն, օրինագծերի հեղինակում եւ այլն)



1

վերլուծությամբ, համադրմամբ եւ ներկայացմամբ: Կայքում յուրաքանչյուր ընտրող կարող է գտնել մեծամասնական կամ համամասնական ցուցակով անցած իր պատգամավորներին, տեսնել նրանց քվեարկությունների եւ ԱԺ նիստերին մասնակցության ընդհանուր պատկերը: Այդ գործիքները թույլ են տալիս ենթադրել, որ կայքի թիրախ խումբը ՀՀ բոլոր քաղաքացիներն են, սակայն կայքի թույլ տարածվածությունից կարելի է հետեւություն անել, որ նախագիծը «չի հասել» իր հիմնական սպառողին՝ ընտրողին: Դրա հիմնական պատճառներից է, թերեւս, կայքի անբավարար մարկետինգը: Սակայն, մյուս կողմից, նախագիծը բավականին լայնորեն օգտագործվում է լրագրողների կողմից՝ որպես վիճակագրական եւ համադրիչ աղբյուր, որի միջոցով էլ որոշ տվյալներ անուղղակիորեն հասնում են ընտրողին:

Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը[1] նույնպես նշված ոլորտում իրականացնում է հետազոտություններ, որոնք մասնավորապես ուղղված են մարզային դպրոցների բյուջեները եւ ՏԻՄ աշխատանքներն առավել թափանցիկ դարձնելուն (առավել մանրամասն՝ տես կայքի Ծրագրեր բաժնում, նկար 2): Սակայն այս դեպքում եւս արդիական է մի խնդիր, որը, թերեւս, ընդհանուր է հայկական նմանատիպ կայքերի համար: Դա կազմակերպության ծրագրերի հանրայնացվածության անբավարար մակարդակն[2] է:



2

1 www.asparez.am

2 Հարկ է նշել, որ նշված եւ նմանատիպ կայքերը որոշ չափով օգտագործում են սոցցանցերը՝ որպես իրենց տեղեկույթի տարածման միջոց, սակայն այդ քայլերն ակնհայտորեն անբավարար չափի են (օրինակ, Parliament Monitoring նախագծի ֆեյսբուքյան էջն ունի ընդամենը 233 հետեւող (12.11.2012թ. տվյալներով):

Հասարակական հաշվետվողականության բարձրացման առանձին միջոց են «դեպքի վայրից» ուղիղ հեռարձակումները (livestream), որոնք դեպքի անմիջական վայրում չգտնվող անձանց հնարավորություն են տալիս հետեւել իրադարձությունների ընթացքին: Օրինակ, Մաշտոցի պուրակի համար պայքարի ընթացքում, հատկապես սուր պահերին, ուղիղ հեռարձակումներին հետեւում էին Facebook-ի 600-1000 օգտատերեր (այդ թվում լրատվամիջոցներ): Այդ գործիքն օգտագործվեց նաեւ Գյումրիի տաքսիների վարորդների բողոքի ակցիաները լուսաբանելու համար (2012թ. հունիս) եւ այլն: Սա, թերեւս, տարածման ամենամեծ ներուժ ունեցող մեթոդներից է՝ կապված շարժական համացանցային միջոցների թվի անկասելի աճի հետ:

Հանրային առցանց վերահսկողության սոցցանցային տիրույթում հիմնականում ակտիվորեն գործում են քաղաքացիական նախաձեռնությունները, որոնց գործունեությունը սովորաբար ներառում է նաեւ տվյալների հավաքման եւ մշակման բաղադրիչը:

Քաղաքացիական վիրտուալ տիրույթում տվյալների խմբավորումը հետապնդում է մի շարք նպատակներ.

1 Գործունեության համար աշխատանքային համապատասխան բազայի ստեղծում

Սոցցանցում քաղաքացիական ցանկացած նախաձեռնություն իր գործունեության որոշակի փուլում կանգնում է միասնական տեղեկատվական բազա ստեղծելու խնդրի առջեւ: Այդ բազայի մեջ ներառվում են նախաձեռնության գործունեության եւ հարակից ոլորտներին վերաբերող օրենսդրությունը, մասնագիտական գնահատականները, կարեւոր քաղաքական կամ հասարակական հայտարարություններն ու տեսակետները, խմբային փաստաթղթերի նախնական եւ վերջնական տարբերակները եւ այլն: Բազան սովորաբար ունենում է փակ, աշխատանքային կարգավիճակ:

Facebook-ում տեղակայված աշխատանքային բազայի առավելություններն են խմբի՝ աշխարհագրորեն սփռված անդամների համար միաժամանակյա հասանելիությունը, ցանկացած մասնակցի կողմից բազան լրացնելու հնարավորությունը եւ այլն: Հիմնական թերությունը, թերեւս, բազայի ներքին խմբավորման, դասակարգման գործիքների բացակայությունն է, որի հետեւանքով նյութերը դասավորվում են պարզապես ըստ վերբեռնման ժամանակագրական հերթականության, ինչը ժամանակի ընթացքում նվազեցնում է նյութերի հասանելիությունը: Որոշ թերություն է նաեւ խմբագրական գործիքների սահմանափակ քանակությունը:

Որպես հնարավոր լուծում կարող է դիտվել բազայի անընդհատ մոնիտորինգը եւ արդիականությունը կորցրած նյութերի հեռացումը (քանի որ Facebook-ը արխիվացման հնարավորություն դեռեւս չի ընձեռում):

3

2 Քարոզչություն

Տվյալների հավաքագրումը, բացի տեղեկատվական նշանակությունից, հաճախ ձեռք է բերում նաեւ քարոզչական գործառույթ: Այս կամ այն խնդրի շրջանակներում մշակվում են տեղեկատվական դոսյեներ, որոնք նպատակ ունեն ոչ միայն բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը, այլ նաեւ որոշակի կողմնորոշիչ ազդեցություն թողնել հանրային կարծիքի վրա: Մասնավորապես, նման քաղաքականություն է որդեգրել «Բանակն իրականում» ֆեյսբուքյան քաղաքացիական նախաձեռնությունը, որի հիմնական նպատակներն են՝ վեր հանել ՀՀ զինված ուժերում առկա թերությունները, օրինախախտումները, բացթողումները եւ հետաքննել ՀՀ զինված ուժերի շարքերում գրանցված մահվան դեպքերը:

Նախաձեռնությունը, մասնավորապես, կազմել է մահացած զինվորների վերաբերյալ տեղեկատվական դոսյեներ, որոնք ազատորեն

հասանելի են սոցցանցերի օգտատերերի՝ խնդրով մտահոգ անձանց, լրագրողների եւ այլոց համար: Նմանատիպ տեղեկատվական գործունեության մշտադիտարկման արդյունքում արվել են այս հետեւությունները.

- դոսյեները պետք է կազմվեն հատկապես զգայուն հանրային խնդիրների վերաբերյալ,
- դոսյեները պետք է լինեն հնարավորինս պարզ լեզվով՝ գրեթե զերծ մասնագիտական եզրույթներից,
- դոսյեներում օգտագործված քանակական տվյալների թիվը պետք է լինի խիստ չափավոր,
- դոսյեները պետք է հասցեական տարածվեն՝ հատկապես թիրախավորելով ԶԼՄ ներկայացուցիչներին՝ նրանց կողմից որպես տեղեկատվության ամբողջական աղբյուր օգտագործվելու համար:

3 Սոցցանցային քաղաքացիական շարժումների կողմից օգտագործվող տեղեկատվական բազաների արդյունավետության գնահատում

- Բազաների հիմնական մարտահրավերը շարունակում է մնալ տվյալների կառավարման միջոցների անկատարությունը: Նույնիսկ անընդմեջ մշտադիտարկումը եւ ավելորդ դարձած տեղեկատվության հեռացումն անընդունակ է կառավարել բազայի ծավալների գծային մեծացման հետեւանքները: Բազայի բաղադրիչները ձեռք են բերում անհավասար հասանելիություն. այն ուղիղ համեմատական է դառնում վերբեռնված տեղեկատվության թարմությանը: Խնդիրը հատկապես արդիական է դառնում տեղեկատվության մեծ ծավալների հետ աշխատող եւ/կամ երկարաժամկետ նպատակներ որդեգրած նախաձեռնությունների համար: Այս պարագայում առավել օպտիմալ է համարվում բազայի համար առանձին ինտերնետային հարթակի ձեւավորումը՝ սեփական որոնողական համակարգով եւ տվյալների հասանելիությունը մեծացնող այլ միջոցներով:
- Քարոզչական նպատակ ներառող տեղեկատվական բազաները պետք է մշակվեն որպես ավարտուն, հստակ ձեւակերպված նյութեր՝ տարածվելիս տարընթերցումների տեղիք չտալու համար: Բացի քարոզչական հիմնական թիրախ հանդիսացող լրագրողներին տրամադրվելուց, անհրաժեշտ է, որ նյութերը տարածվեն նաեւ նախաձեռնության անդամների կողմից (Տես նկար 3): Ճիշտ ժամանակին ճիշտ շեշտադրումներ ունեցող նման նյութերի տարածումը կարող է լայն հասարակական ալիք ստեղծել:

Բջջային հեռախոսը որպես իրավունքների պաշտպանության գործիք



Արթուր Պապյան

«Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» կազմակերպության նախագահ: Լրագրող, բլոգեր, նոր տեխնոլոգիաների հավերժական ուսանող–հետազոտող:
***Facebook**: /ditord*
***Twitter**: @ditord*
***Blog**: ditord.com*

Բջջային հեռախոսը ժամանակակից իրավապաշտպանի ձեռքում կարող է ամենահաս, ամենաօգտակար ու անփոխարինելի գործիք դառնալ: Մերօրյա այս «շվեյցարական բանակային դանակի» օգտագործմանը, սակայն, հարկավոր է մոտենալ բանիմացորեն եւ ստեղծագործաբար:

Բջջային հեռախոսը թույլ է տալիս իրավախախտումների մասին կարճ հաղորդագրություններ ուղարկել դեպքի վայրից կամ զանգել եւ տեղեկացնել այդ մասին: Ժամանակակից հեռախոսները հնարավորություն են տալիս արձանագրել իրավախախտման փաստը՝ օգտագործելով հեռախոսի ֆոտոխցիկը, ձայնագրիչը, իսկ ավելի մեծ հնարավորություններ ունեցող հեռախոսների դեպքում՝ տեսագրել, ֆիքսել իրավախախտման ժամանակը եւ վայրը՝ օգտվելով գեոլոկացիոն համակարգերից: Սա հնարավորություն է ընձեռում՝ ունենալ իրավախախտման ժամկետի եւ վայրի վերաբերյալ հավելյալ ապացույցներ:

Բջջային հեռախոսների օգտագործմամբ անսպասելի եւ գրեթե ինքնաբուխ ֆլեշմոբերի եւ բողոքի ակցիաների կազմակերպումը՝ դրանց համակարգումը եւ իրականացումը, եւս մեկ հնարավորություն է, որը կարող է հարստացնել իրավապաշտպանի զինանոցը:

Չնայած բացվող մեծ հնարավորություններին, իրավապաշտպան գործունեության մեջ բջջային հեռախոսների կիրառությունը Հայաստանում համակարգված եւ ծրագրված բնույթ չի կրում: Այս առումով բջջային հեռախոսի կիրառությունները Հայաստանում կարելի է դիտարկել **մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստերի հավաքման եւ վավերագրման**, **իրավախախտումների վերաբերյալ ահազանգման եւ իրավապաշտպան գործունեության կազմակերպման տեսանկյուններից**:

Վերջին տարիներին մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստերի հավաքման եւ վավերագրման ամենահայտնի եւ կոնկրետ արդյունքների հանգեցրած օրինակը, թերեւս, 2010 թվականի սեպտեմբերին YouTube կայքում հայտնված տեսանյութն է, որտեղ մինչեւ գոտկատեղը մերկ սպան նվաստացնում ու բռնություն էր կիրառում զինվորների նկատմամբ: Բջջային հեռախոսով նկարահանված տեսանյութի առնչությամբ քրեական գործ էր հարուցվել: 2010-11 թվականներին կրկին YouTube-ում հրապարակվեցին նաեւ դպրոցում ուսուցչի անընդունելի վարքագծի մասին բացահայտումներ, որոնց արդյունքում բջջային հեռախոսով նկարահանված տեսանյութերում հայտնված ուսուցիչները հեռացվեցին աշխատանքից:

Բջջային հեռախոսների ավելի հետաքրքիր կիրառության օրինակներ կարելի էր տեսնել բնապահպան ակտիվիստների կողմից Երեւանի Մաշտոցի պողոտային հարակից պուրակում կանաչ տարածքների հաշվին կրպակներ կառուցելու՝ քաղաքապետարանի ծրագրերի դեմ բողոքի ակցիաների ժամանակ: Բջջայիններն օգտագործվում էին որպես քաղաքացիական լրագրության գործիք. ակտիվիստները հեռախոսներով տասնյակ լուսանկարներ, տեսանյութեր էին ներբեռնում ինտերնետ, գրում էին ֆեյսբուքյան ստատուսներ, անգամ ուղիղ վիդեոհեռարձակումներ էին իրականացնում:

Հաջողված օրինակների թվում, ընդհանուր առմամբ, կարելի է դասել նաեւ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում բջջային սարքերի միջոցով ընտրախախտումների վերաբերյալ փաստերի հավաքումը եւ տեղադրումն ինտերնետում, եթե ազատ եւ արդար ընտրական գործընթացի ապահովումը դիտարկենք որպես մարդու իրավունքի բաղկացուցիչ մաս:

Բջջային հավելվածները՝ անփոխարինելի օգնականներ

Բջջային հավելվածները (կամ mobile app-ները), համակարգչային ծրագրեր են, որոնք նախատեսված են ժամանակակից «խելացի» հեռախոսների՝ սմարթֆոնների, շարժական համակարգիչների՝ թաբլեթ-

ների եւ այլ համակարգչային բջջային սարքերի համար: Դրանք սովորաբար հասանելի են բջջային հավելվածների տարածման պլատֆորմների միջոցով: Տարբեր հեռախոսային օպերացիոն համակարգերի համար սովորաբար գոյություն ունեն տարբեր համանման պլատֆորմներ: Այսպես՝ iPhone-ների համար գործում է Apple App Stor, Android օպերացիոն համակարգով հեռախոսների համար՝ Google Play, Հայաստանում առայժմ առավել տարածված՝ Symbian համակարգով Nokia հեռախոսները կարող են օգտվել Nokia Store-ից, իսկ Windows Mobile-ի համար գործում է Windows Phone Store:





Բջջային հավելվածների մի մասն անվճար է, մյուսները վաճառվում են բավական մատչելի գներով: Դրանք կարելի է բեռնել համակարգչով եւ տեղադրել հեռախոսում, կամ անմիջապես բեռնել հեռախոսի մեջ եւ տեղադրել:

Շատ բջջային հավելվածներ հասանելի են միանգամից մի քանի բջջային օպերացիոն համակարգերի համար: Ստորեւ բերում ենք մի շարք բջջային հավելվածների օրինակներ՝ որոնք կարող են օգտակար լինել իրավապաշտպանին:



Opera Mobile կամ համարժեք ինտերնետային զննարկիչ

Ժամանակակից բոլոր բջջային հեռախոսներն ունեն ինտերնետային զննարկիչ, որն ամենաբազմաֆունկցիոնալ եւ օգտակար ծրագիրն է ցանկացած բջջային հեռախոսում: Եթե ինչ-որ պատճառով հեռախոսում նախատեղադրված զննարկիչը չի բավարարում ձեր պահանջները,

կարելի է հեռախոսում տեղադրել Opera Mobile զննարկիչ, որը հասանելի է Հայաստանում տարածում ունեցող բոլոր բջջային հեռախոսների համար:

Կարեւոր է հասկանալ, որ ինտերնետային օգտակար ծառայությունների եւ կայքերի ճնշող մեծամասնությունն այսօր ունի գերազանց մշակված բջջային տարբերակ եւ թույլ է տալիս ազատ օգտվել դրանցից:

Սոցցանցերի հավելվածներ



Facebook, Twitter, Google+, YouTube, Instagram, Foursquare, SoundCloud սոցիալական ցանցերն ունեն համապատասխան հավելվածներ, որոնք հնարավորություն են տալիս ցանկացած վայրից գրել կարճ հաղորդագրություն (ստատուս), սոցցանց բեռնել լուսանկարներ, տեսանյութեր եւ ձայնագրություններ եւ դրանք տարածել ձեր ցանցով: Կախված հեռախոսի տեխնիկական հնարավորություններից՝ հաճախ հնարավոր է լինում նաեւ տարածվող հաղորդագրությանը, լուսանկարին, տեսանյութին եւ ձայնագրությանը կցել նաեւ ձեր կոորդինատները՝ լրացուցիչ փաստական հիմքեր կցելով եւ կշիռ հաղորդելով ձեր ահազանգին:

Բլոգգինգ



Հայտնի բլոգային հարթակները՝ Wordpress, Blogger, Tumblr, ունեն իրենց համապատասխան բջջային հավելվածները, որոնք մեծապես հեշտացնում են հոդվածների հրապարակումը ցանկացած վայրից:

Ուղիղ վիդեոհեռարձակում

Գոյություն ունեն մի խումբ բջջային հավելվածներ, որոնք հնարավորություն են տալիս բջջային հեռախոսից ուղիղ միացմամբ վիդեո հեռարձակել: Բազմաթիվ բջջային հեռախոսներում

հասանելի են Bambuser, Qik եւ Ustream ծառայությունների բջջային հավելվածները: Ուղիղ վիդեոհեռարձակման հնարավորություն է ընձեռում նաեւ Google+ սոցցանցը: Նույն նպատակով կարելի է կիրառել նաեւ Skype-ը, եթե հեռարձակված տեսապատկերն այնուհետեւ վերահեռարձակվում է հեռուստատեսությամբ կամ ինտերնետային հեռուստատեսությամբ:



Ահազանգերի «հանրային ջանք»՝ Crowdsourcing (Քրաուդսորսինգ)

Իրավախախտումների մասին հանրությունից ահազանգեր ստանալու՝ ամբողջ աշխարհում ամենահայտնի եւ Հայաստանում փորձարկված (kanach.am, iditord.org) տարբերակը Ushahidi (Ուշահիդի) համակարգն է, որն ունի անվճար բջջային հավելվածներ iOS եւ Android օպերացիոն համակարգերով սարքերի համար, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս ահազանգեր ստանալ եւ գրանցել SMS կարճ հաղորդագրությունների միջոցով, այնուհետեւ այդ ահազանգերը քարտեզագրելու, ինչպես նաեւ որպես զեկույցներ ներկայացնելու համար: Հայաստանում հաջողությամբ գործում է նաեւ mynews.am հանրային թղթակցության հարթակի բջջային հավելվածը Android համակարգով հեռախոսների համար, որը նույնպես կարելի է օգտագործել ահազանգեր հրապարակելու եւ դրանք հանրության ուշադրությանը ներկայացնելու համար:

Աշխատանքի կազմակերպում

Գոյություն ունեն բազմաթիվ բջջային ծրագրեր, որոնք օգնում են աշխատանքի կազմակերպման, միջոցառումների ծրագրման գործում: Դրանց թվում պետք է դասել Google ընկերության ծրագրային հավելվածները՝ էլ. փոստ, «օֆիսային» փաթեթ, անելիքների ցուցակ, օրացույց: Այս ծրագրերի միջոցով հնարավոր է միասին ծրագրել միջոցառումներ, քննարկել եւ համատեղ աշխատել փաստաթղթերի վրա, հանդիպումներ կազմակերպել եւ ուղարկել դրանց հրավերները, որոնք ավտոմատ կերպով կհայտնվեն հրավիրյալների օրացույցում ու նրանց կուղարկեն համապատասխան հիշեցումներ:

Ծանոթացում բջջային անվտանգությանը

Բջջային հեռախոսը, լինելով անփոխարինելի օգնական, նաեւ ամենահաս լրտես է՝ ձեր գրպանում: Իրավապաշտպանը պետք է գիտակցի, որ իր հեռախոսը միշտ կարող է գաղտնալսվել, դրանով փոխանցվող տվյալները հնարավոր է կարդալ, հեռախոսում կարելի է տեղադրել վիրուսային, լրտեսական ծրագրեր: Բացի այդ, բուն հեռախոսը կարող է առգրավվել ցանկացած պահի, եւ դրա վրա գտնվող ինֆորմացիան կարող է ոչնչացվել կամ օգտագործվել իր դեմ: Այդ իսկ պատճառով, պետք է առնվազն գիտակցել, թե ինչ տեղեկատվություն կա ձեր հեռախոսում, եւ պատրաստ լինել դրա կորստին կամ անցանկալի ձեռքերում դրա հայտնվելու՝ տհաճ հավանականությանը:

Վիրուսներից եւ անցանկալի լրտեսական ծրագրերից, ինչպես նաեւ որոշ հաքերային հարձակումներից պաշտպանության համար հեռախոսային անվտանգության մի շարք համակարգեր կան, որոնցից առավել ճանաչվածներն են McAfee Mobile Security, Kaspersky Mobile Security եւ F-Secure Mobile Security փաթեթները: Տարբեր հեռախոսային օպերացիոն համակարգերի համար կան բազմաթիվ այլ տարբերակներ եւս: Ոլորտը մրցակցային եւ անընդհատ փոփոխվող է, այնպես որ, այստեղ դժվար է միանշանակ լուծումներ առաջարկել: Այդուհանդերձ, գնի, օգտագործման հարմարության եւ հնարավորությունների առումով, թերեւս առավել հարմարը Kaspersky Mobile Security-ն է:

Ինչ վերաբերում է հեռախոսի ֆիզիկական առգրավման կամ կորստի հնարավորությանը, պետք է հասկանալ, որ բջջային հեռախոսներում կան լուսանկարներ, տեսանյութեր, հասցեագիրք, էլ. փոստ, ինտերնետային կայքեր մուտք գործելու արդյունքում պահպանված գաղտնագրեր, օրակարգ: Այդ ամենը հեռախոս արտադրողի կողմից տրամադրվող ծրագրային ապահովման միջոցով հնարավոր է հեշտությամբ եւ պարբերաբար պահպանել համակարգչում՝ հնարավոր կորստի դեպքում վերականգնելու հնարավորություն ունենալու համար: Ձեր ունեցած տվյալներն անցանկալի ձեռքերում հայտնվելու հավանականությունն աչքի առաջ ունենալով՝ միշտ անհրաժեշտ է իմանալ հեռախոսը Reset անելու՝ գործարանային վիճակին բերելու համար անհրաժեշտ քայլերը: Բոլոր հեռախոսներն ունեն այդ հնարավորությունը, որի ժամանակ հեռախոսի բոլոր տվյալները ջնջվում են եւ այն բերվում է մաքուր՝ գործարանային վիճակի: Տվյալները հնարավոր է լինում վերականգնել ձեր համակարգչում նախօրոք պահված օրինակից՝ հեռախոսի մեջ դրանք վերստին բեռնելու միջոցով:

Սոցիալական հավելվածներն իրավապաշտպան նախաձեռնություններում

Դարյա Ալեքսեեւա

Ռուսական «Սոցիալական հավելվածների ջերմոց» պորտալի խմբագիր: Աշխատել է տարբեր հասարակական կազմակերպություններում: Մասնագիտությամբ ֆինանսիստ է, հետաքրքրված է սոցիալական ձեռնարկատիրությամբ, բարեգործությամբ, բլոգինգով:
***Facebook**: /alekseeva.dasha*
***Web**: http://te-st.ru*

Ինչու են քաղաքացիական ակտիվիստներին անհրաժեշտ ինտերնետային ռեսուրսներ: Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է հասկանալ, թե քաղաքացիական ակտիվիստներին ընդհանրապես ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ եւ ինչի համար: Տեղեկատվության մատչելիություն, այդ թվում նաեւ պետական բաց տվյալների աղբյուրներ, կամավորական ռեսուրսներ, հասարակության մեջ գերիշխող կարծիքներ, լրատվամիջոցների հասանելիություն, նվիրատվություններ հավաքելու, նոր համակիրներ ներգրավելու մեխանիզմներ: Վերջապես՝ սեփական ծրագրերի լոբբինգ եւ առաջմղում ինտերնետում, իշխանության հետ երկխոսության եւ ինստիտուցիոնալ փոփոխությունների հնարավորություններ:

Քաղաքացիական հասարակության ակտիվիստներն ու իրավապաշտպանները տարիներ շարունակ զբաղվել եւ շարունակում են զբաղվել այս ամենով, բայց հիմա այս գործունեության մի մասն ինտերնետում ծավալելն ավելի արդյունավետ է: Կարելի է, արդյո՞ք, տեղեկատվական արշավ անցկացնել կամ գումար հավաքել սոցիալական ցանցերում: Այո, կարելի է՝ այնպես, ինչպես, օրինակ, կարելի է ճաշ եփելու կաթսայում թեյ

եռացնել: Այսինքն՝ այո՛, հնարավոր է, բայց դրա համար ավելի հարմար միջոց կա՝ թեյնիկը:

Քաղաքացիական օնլայն նախաձեռնությունների դեպքում էլ է նույնը: Դուք կարող եք սկսել ձեր մասին խոսել Facebook-ում եւ աստիճանաբար համակիրներ հավաքել: Բայց կարող եք միանգամից գալ մասնագիտացված ինտերնետային հարթակ, որը կարող է նվիրված լինել միգրանտներին իրավաբանական օգնության տրամադրմանն ու պետիցիաների՝ կոլեկտիվ դիմումների, միջնորդագրերի պատրաստմանը կամ էլ բնապահպանական նախաձեռնություններին, մտնել արդեն իսկ ձեւավորված օնլայն համայնք, որտեղ նմանատիպ խնդիրների կառավարման մեխանիզմներն արդեն իսկ մշակված են:

Հենց այդ ինտերնետային հարթակներն էլ կոչվում են քաղաքացիական հավելվածներ: Լայն առումով, քաղաքացիական հավելվածներն ինտերնետային/տեխնոլոգիական հավելվածներ են, որոնք սոցիալական նշանակության որոշակի խնդիրներ են լուծում: Այսինքն, ցանկացած ինտերակտիվ կայք, որտեղ օգտատերը կարող է թողնել կամ ստանալ ինչ-որ տեղեկություն, առաջարկել կամ օգտվել ինչ-որ ծառայությունից, բողոքել ինչ-որ բանից կամ ինչ-որ խնդրի լուծման տարբերակներ առաջարկել՝ քաղաքացիական հավելված է:

Հիմա խոսենք այն մասին, թե ինչպիսին են լինում քաղաքացիական հավելվածները, եւ սովորաբար ինչպես են դրանք օգտագործվում իրավապաշտպանների կողմից:

Շահերի պաշտպանությանն ուղղված քաղաքացիական հավելվածներ

Իրավունքների պաշտպանությունը հասարակական կազմակերպությունների գործունեության կարեւոր գործառույթներից է: Իրավունքների խախտման, ճնշումների, խտրականության հաճախակի դեպքերը սովորական են այն մարդկանց համար, ովքեր աշխատում են բնակչության խոցելի խմբերի հետ՝ փախստականներ, որբեր, միայնակ մայրեր, հաշմանդամներ: Այս խնդիրների լրջության աստիճանն ու ծավալներն անհայտ են մնում բնակչության լայն խավերի համար, ովքեր ուղղակիորեն չեն բախվել դրանց: Սա իրավիճակի ամբողջական պատկերի մասին սխալ տպավորություն է ստեղծում՝ արժեզրկելով ձեր կատարած աշխատանքը: Ինչպե՞ս կարելի է գնահատել ձեր աշխատանքը, եթե դուք չեք խոսում ձեր կատարած հարցումների կամ դիմումների, արտառոց դեպքերի, պատմությունների մասին եւ դրանք չեք դարձնում լրատվամիջոցների լուսաբանման առարկա: Իհարկե, կայքի սահմաններում դա անելը

բավականին դժվար է, այդտեղ չկան համապատասխան վիզուալ գործիքներ, եւ լսարանն էլ բավականաչափ մեծ չէ, որպեսզի կրիտիկական զանգված ձեւավորի: Սակայն կան տեղեկությունների տարածմանը կամ իրազեկության բարձրացմանն ուղղված հատուկ քաղաքացիական հավելվածներ:

Change.org - Խոշորագույն օնլայն հարթակ է պետիցիաներ հղելու եւ առանձին տեղեկատվական արշավներ անցկացնելու համար: Եթե, օրինակ, ձեր շահառուներից մեկը տուժել է պետական կառույցների դաժան վերաբերմունքից, կամ ինչ-որ մի ընկերություն խախտում է էկոլոգիական չափանիշները, եթե պայքարում եք գենդերային հավասար իրավունքների համար, կարող եք օնլայն պետիցիա կազմել եւ աշխարհի հազարավոր մարդկանց ուշադրությունը հրավիրել նշված խնդրի վրա (Տես նկար 1):



1

Կայքում կարելի է տեսնել արշավների մի քանի օրինակներ, որոնք անցկացվում են Հայաստանի մշակութային ժառանգության պաշտպանության, պատմական արդարության վերականգնման համար: Այստեղ մեծ ուշադրության են արժանանում հասարակական-քաղաքական արշավները: Ռուսալեզու հարթակների շարքում կարելի է առանձնացնել Демократор.ру, Петиции в действии նախագծերը:

Կաշառքների եւ իրավախախտումների մոնիտորինգ

Օնլայն «բողոքի գրքերը» քաղաքացիական հավելվածների առանձին մասն են կազմում: Դրանք ինտերնետ օգտատերերի շրջանում ամենից տարածվածներն են:

Ընտրախախտումների քարտեզ (նման նախագիծ արդեն գործում է նաեւ Հայաստանում), կաշառքների քարտեզ, հաշմանդամների համար մատչելի տարածքների քարտեզ՝ այս ամենը տեխնոլոգիական լուծումներ են, որոնք օգտատերերին հնարավորություն են տալիս պատմել իրենց իրավունքների խախտումների մասին, այդ թվում նաեւ ընտրական իրավունքի խախտումների եւ կոռուպցիայի մասին: Բոլոր տեղեկությունները հավաքվում են քարտեզի վրա՝ հնարավորություն տալով հետեւել, թե որ տարածքները կամ խախտումների տեսակներն են ամենից տարածվածները: Նման ռեսուրսների թերությունն այն է, որ խնդիրների լուծման մեխանիզմներ չեն առաջարկվում, դրանք ավելի շատ տեղեկատվական եւ վիճակագրական գործառույթ ունեն:



2

Այսպես, օրինակ՝ Роскомвзятка[1] պորտալում հավաքվել են 6620 հազար դոլարից ավելի ընդհանուր գումարով կաշառքի մասին ահազանգեր՝ տրված կենցաղային իրավիճակներում (անթույլատելի տեղում ալկոհոլ օգտագործելու, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար եւ այլն, նկար 2): Եթե ձեր հասարակական կազմակերպությունը զբաղվում է, օրինակ, կոռուպցիայի դեմ պայքարով, ապա կարող եք այս ռեսուրսները հանգիստ օգտագործել հետազոտություններ կատարելու կամ էլ ինֆորմացիոն առիթներ ստեղծելու համար: Այս հավելվածների մեծ մասի առավելությունն այն է, որ դրանք բաց ծրագրային կոդեր ունեն, ինչը նշանակում է, որ կարելի է ստեղծել դրանց հայաստանյան տարբերակները՝ առանց տեղայնացման վրա մեծ գումարներ ծախսելու:

1 http://roskomvzyatka.com/

Բաց տվյալներ

Մոնիտորինգային հավելվածների մեկ այլ խումբ են այն ինտերնետային հարթակները, որոնք աշխատում են բաց տվյալների հիման վրա: Օրինակ, ռուս պաշտոնյաների եկամուտների մասին ինֆորմացիան հավաքված է Հրապարակային եկամուտներ Публичные доходы[2] կայքում (տեղեկությունների աղբյուրը հարկային հայտարարագրերն են):

Մեկ այլ ռեսուրս՝ քիչ թե շատ հասկանալի գործնական նշանակությամբ, Ռուսարդարադատությունն է՝ Росправосудие[3]: Կայքում հավաքված են ավելի քան 18 միլիոն դատական որոշումներ, դատավորների եւ դատապաշտպանների մասին տեղեկություններ: Դրանք օգնում են դատական պրոցեսի ժամանակ ընտրել ճիշտ դատապաշտպանին եւ կանխատեսել դատական լսումների ելքը՝ ելներով նմանատիպ դեպքերի կամ այն մարդկանց աշխատանքային փորձից, ովքեր զբաղվելու են այդ գործով:

Ռեսուրսներ հավաքագրելու քաղաքացիական հավելվածներ

Կայուն միջոցներ չունեցող սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը ցավոտ հարց է: Ոչ առեւտրային կազմակերպությունների մեծ մասը դրամաշնորհների եւ հովանավորների միջոցով է այս հարցը լուծում, մասնավոր նվիրատվությունների ռեսուրսը քիչ է օգտագործվում: Crowdfunding (Քրաուդֆոնդինգ) հարթակները վեբ պորտալներ են, որտեղ կարելի է թողնել ձեր նախագծի մասին համառոտ տեղեկություններ եւ նշել, թե որքան գումար է անհրաժեշտ այդ նախագիծն իրականացնելու համար: Եթե ձեր գաղափարը դուր գա ինտերնետ հանրությանը, շատ մարդիկ պատրաստ կլինեն աջակցել դրան՝ ոչ մեծ ներդրումներ անելով: Ֆոնդերի հայթայթման այդպիսի արշավներն արդյունավետ են լինում եւ բարեգործական, եւ ստեղծագործական նախագծերի դեպքում: Crowdfunding-ն արագորեն զարգանում է ամբողջ աշխարհում, վերջին տարիների ընթացքում միայն Ռուսաստանում 20-ից ավելի նման հարթակներ են ստեղծվել: Միջազգային ամենամեծ ռեսուրսներից մեկը, որտեղ կարող եք ռեսուրսների հավաքագրելու այդօրինակ արշավ սկսել, Global Giving Fund[4] կայքն է (Տես նկար 3):

2 http://publicprofit.ru/

3 http://rospravosudie.com/

4 http://www.globalgiving.org/



3

Եթե չհասցնեք որոշակի ժամանակահատվածում ձեզ անհրաժեշտ ամբողջ գումարը հավաքել, արդեն հավաքված նվիրատվությունները հետ են վերադարձվում: Այդ պատճառով էլ շատ կարեւոր է ճիշտ հայտ ձեւակերպելը եւ այս հարթակում մտածված, ճիշտ արշավ ծավալելը:

Ինտերնետային ցանցում միայն ֆինանսական միջոցներ չէ, որ կարող եք գտնել: Եթե ձեր կազմակերպությունը կամ շարժումն օնլայն կամավորների կարիք ունի, որոնք կարող են օգնել ինֆորմացիոն աջակցության, թարգմանության, իրավաբանական ծառայությունների գործում, կարող եք նման մարդկանց փնտրել միջազգային այնպիսի կայքերում, ինչպիսիք են Onlinevolunteering.org-ը, Sparked.com-ը եւ այլն:

Ինչ է անհրաժեշտ հիշել

Քաղաքացիական հավելվածների օգտագործումը կարող է շատ դեպքերում հեշտացնել իրավապաշտպանների եւ ակտիվիստների կյանքը՝ սկսած ժամանակի խնայողությունից, վերջացրած սոցիալական կապերի ընդլայնումով: Բայց միշտ պետք է հիշել, որ ցանկացած հավելված միայն գործիք է, ոչ թե լուծում: Եթե ստեղծում եք հավելված Միջին Ասիայում սեռական բռնության ենթարկված կանանց իրավունքների պաշտպանության

մասին, ապա կարեւոր է հիշել, որ այդ կանայք գործնականում չեն օգտվում ինտերնետից եւ կգերադասեն անանուն մնալ, այդ պատճառով էլ ավելի լավ է նրանց հետ ոչ թե օնլայն, այլ օֆլայն աշխատել (իրական սոցիալական կենտրոններում, ոչ ինտերնետային տարածքում): Բնության պաշտպանությանն ուղղված տեղեկատվական արշավ ծրագրելով՝ պետք է հստակ հասկանաք, թե ինչ եք անելու ձեր հավաքած տասնյակ հազարավոր վիրտուալ ստորագրությունների հետ. որ պաշտոնյային է անհրաժեշտ դրանք փոխանցել, որոնք պետք է լինեն ձեր հետագա քայլերը… Այդ պատճառով էլ, չնայած վիրտուալ տեխնոլոգիաների բոլոր առավելություններին, խուսափեք ինքներդ ձեզ համար «օդային ամրոց» կառուցելուց:

Crowdsourcing. հայաստանյան փորձը

Սամվել Մարտիրոսյան

Հանրային տեղեկատվության հավաքագրումը, որը շատ լեզուներում մնացել է անգլերեն հակիրճ Crowdsourcing (Քրաուդսորսինգ) ձեւով, Հայաստանում դեռեւս քիչ զարգացած ոլորտ է, չնայած այս ուղղությամբ մի քանի հաջողված փորձ արդեն գոյություն ունի:

Crowdsourcing-ը կարող է ներառել ամենաընդհանուր թեմաներից մինչեւ նեղ մասնագիտականները: Օրինակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստեղծել է GiveMeInfo նախագիծը[1], որն ունի շատ նեղ ուղղվածություն. այստեղ հավաքագրվում են բոլոր դեպքերը, երբ պետական կառույցները խախտում են տեղեկատվության ազատության մասին օրենքը (Տես նկար 1): Յուրաքանչյուր մարդ, ում անհիմն մերժել են, կիսատ կամ ուշացված պատասխան են տվել տեղեկություն ստանալու դիմումի դիմաց, հնարավորություն ունի իր դեպքը ներբեռնել կայք, որտեղ արդեն ձեւավորվում է վիճակագրությունը՝ ըստ գերատեսչությունների:



Ստեղծիր տեղեկություն ստանալու Քո հարցման պատմությունն այստեղ.

1

Մյուս կողմից, Crowdsourcing-ը կարող է ունենալ շատ ավելի լայն կիրառում, ինչպես դա արվում է հանրային լրագրության MyNews.am հարթակի վրա (ստեղծվել է Հանրային լրագրության ակումբի կողմից):

1 http://givemeinfo.am

Այստեղ յուրաքանչյուրը կարող է գրանցվել որպես հանրային լրագրող եւ իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ հաղորդագրություններ տեղադրել: Այստեղից յուրաքանչյուր հաղորդագրություն շարժական սարքի միջոցով կարելի է հասցեագրել տարբեր պետական եւ այլ կազմակերպությունների: Ցանցում գրանցված են հարյուրավոր մասնակիցներ, որոնցից ստացված մեծաքանակ ինֆորմացիան տեղադրվում է նաեւ քարտեզի վրա:

Հայաստանում Crowdsourcing-ի ամենաառաջին հաջողված փորձը բնապահպանական Kanach.am կայքն էր, որը ստեղծվել էր բաց կոդերով գրված (open source) Ushahidi (Ուշահիդի) հարթակի վրա (Տես նկար 2): Այդ կայքը Երեւանի յուրաքանչյուր բնակչի թույլ է տալիս ահազանգել ապօրինի ծառահատումների մասին: Ահազանգները հայտնվում են քարտեզի վրա եւ թույլ են տալիս բնապահպաններին՝ դրանք ստուգել եւ արձագանքել:

2

Քարտեզագրական հնարավորություններ ունեցող Crowdsourcing հարթակները գնալով շատանում են: Այսպես, գործում է «Կարգի բերեք» կայքը[2], որը հիմնված է mySociety կազմակերպության կողմից պատրաստված FixMyStreet հարթակի վրա: Այս հարթակը քաղաքացիներին թույլ է տալիս, օգտվելով կայքի հնարավորություններից, քարտեզի վրա ահազանգ տեղադրել քաղաքում առկա տարբեր խնդիրների՝ օրինակ, փողոցներում փոսերի, թափված աղբի, ջարդված սալաքարերի կամ փողոցի վատ լուսավորման վերաբերյալ: Տվյալ հարթակն այս պահին իրականացվում է Հայաստանի երեք քաղաքներում՝ Վեդի, Վայք եւ Սիսիան: Ուշագրավ է, որ քաղաքացիների յուրաքանչյուր ահազանգ ավտոմատացված կարգով ուղարկվում է քաղաքային իշխանությունների ներքին փաստաթղթերի շրջանառության համակարգին, ինչը ստեղծում է երաշխիքներ, որ տեղական իշխանություններն այդ խնդիրներով իսկապես կզբաղվեն:

Այդօրինակ քարտեզագրական crowdsourcing հարթակ է ստեղծվել Երեւանի համար՝ CityBags-ը[3], որը գործում է անկախ տեղական իշխանություններից եւ վերջիններիս հետ տեղեկատվության փոխանակման անմիջական համակարգ չունի (Տես նկար 3): Այստեղ, բացի ահազանգերից, քաղաքացին հնարավորություն ունի նաեւ ուղարկել առաջարկներ՝ քաղաքային խնդիրները շտկելու վերաբերյալ:

2 http://kargibereq.am/
3 http://www.citybugs.am

3

Ամենազանգվածային crowdsourcing ծրագրերից կարելի է կոչել iDitord[4] հարթակը, որն ուղղված է ընտրական խախտումների մոնիտորինգին (ստեղծվել է Ushahidi հարթակի վրա) (Տես նկար 4): 2012 թվականի հայաստանյան խորհրդարանական ընտրությունների նախընտրական արշավի եւ ընտրությունների օրվա ընթացքում յուրաքանչյուր քաղաքացի կարող էր ընտրական օրենսդրության հետ կապված խախտումների մասին ահազանգ ուղարկել հարթակին: Ընդ որում, ահազանգեր հնարավոր էր ուղարկել շատ տարբեր եղանակներով. անմիջապես կայքից, հատուկ հեռախոսահամարին զանգահարելով, կարճ հաղորդագրություն ուղարկելով, Twitter-ում #iditord hashtag-ով գրառում կատարելով: Հնարավոր էր ահազանգել նաեւ iOS եւ Android օպերացիոն համակարգերով աշխատող շարժական սարքերից:

4

iDitord հարթակը համագործակցում էր ինչպես դիտորդական առաքելություն իրականացնող ՀԿ-ների, քաղաքացիական ակտիվիստների, այնպես էլ՝ լրատվամիջոցների հետ: Բացի դրանից, տեղեկատվության փոխանակում էր իրականացվում մեկ այլ Crowdsourcing հարթակի՝ MyNews հետ: Նման լայն համագործակցության արդյունքում հարթակը ստացավ 1400-ից ավելի ահազանգ: Բացի դրանից, ՀՀ գլխավոր դատախազությունը, ոստիկանությունը եւ ԿԸՀ-ն iDitord հարթակը ներառել էին իրենց մշտադիտարկվող աղբյուրների ցանկի մեջ: Հարթակում հայտնվող ահազանգերը մեջբերվեցին գրեթե բոլոր ցանցային եւ ավանդական ԶԼՄ-ների կողմից: Տարբեր ոլորտների շահառուների կողմից

4 http://iditord.org/

հարթակի լայն կիրառությունը կարեւոր է դարձնում դրա շահագործումը նաեւ նախագահական ընտրությունների ժամանակ՝ 2013 թվականի փետրվարին:

Որն է Crowdsourcing ծրագրերի բացառիկ օգտակարությունը

- Նման հարթակները թույլ են տալիս տեղեկատվության հավաքագրումը դարձնել համատարած: Օրինակ, քաղաքային խնդիրների դեպքում, տեղական իշխանությունները հնարավորություն են ունենում անընդհատ տեղեկատվության հոսք ստանալ ամենադժվար դիտարկվող տարածքներից: Կամ, ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր քաղաքացի դառնում է հնարավոր դիտորդ՝ ընդլայնելով դիտարկվող տարածքները եւ դիտարկման ժամանակաընթացքը:
- Նման ծրագրերը քաղաքացիներին դարձնում են ավելի ակտիվ, ավելի ներգրավված եւ սոցիալապես պատասխանատու:

Որոնք են բարդությունները եւ լուծման հնարավոր ուղիները

- Ամենաբարդ խնդիրներից են՝ մարդկանց ներգրավումը, ծրագիրը հասարակության համար հետաքրքիր դարձնելը, քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաջալերելը: Տվյալ հարցը լուծելու համար պետք է հնարավորինս լայն իրազեկման արշավ անցկացնել այլընտրանքային եւ ավանդական մեդիաների միջոցով: Կարեւոր է գտնել այնպիսի անհատների, մարդկանց խմբեր եւ կազմակեպություններ, որոնք հետաքրքրված են տվյալ հարթակի օգտագործմամբ, եւ հարթակի շուրջ ստեղծել օգտատերերի համայնք:
- Ապահովել գաղտնիությունն այն դեպքերում, երբ դա կարեւոր է: Բազմաթիվ դեպքերում քաղաքացիները կարող են խուսափել տեղեկատվություն տրամադրելուց, եթե չապահովվի իրենց անվան գաղտնիությունը: Հարթակի ստեղծողները սա պետք է հստակ գիտակցեն եւ ապահովեն տեղեկատվության իրենց աղբյուրի անվտանգությունը:
- Հարթակը չպետք է լինի ինքնապարփակ: Համայնքի կողմից տրամադրված տեղեկատվությունը պետք է տարածվի, հասանելի դառնա ավելի լայն շրջանակների, այն մարդկանց եւ կազմակերպություններին, որոնք շահագրգռված են ստանալ նման տեղեկատվություն: Դրա համար տեղեկատվությունը պետք է տարածել սոցիալական մեդիաների միջոցով, ինչպես նաեւ հնարավորինս լայնորեն համագործակցել ավանդական լրատվամիջոցների հետ:

- Կայքի պաշտպանությունը պետք է լինի պատշաճ մակարդակի վրա, քանի որ նման ծրագրերը շատ հաճախ ունենում են թշնամիներ, որոնք հաքերային միջոցներով ձգտում են խափանել հարթակի աշխատանքը: Օրինակ, iDitord հարթակը խորհրդարանական ընտրությունների ժամանակ ենթարկվեց լայնածավալ DDoS հաքերային հարձակման, ինչի պատճառով ավելի քան երեք ժամ անհասանելի էր: